2026, ՀՈԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 20 (712)

# Տիգրանյան Տարոնի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց



*Հոկտեմբերի 16-ին*

### «Save Armenia» կազմակերպության պատվիրակությանը

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Save Armenia» կազմակերպության պատվիրակությանը՝ գլխավորությամբ կազմակերպության գործադիր տնօրեն դոկտոր Փոլ Մյուրեյի:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց կազմակերպությանը՝ արցախահայության իրավունքների պաշտպանության, Ադրբեջանում պահվող հայ գերիների ազատ արձակման և Արցախի հայկական հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ գործադրվող ջանքերի համար: Նորին Սրբությունը կարևորեց նաև կազմակերպության գործունեությունը՝ ի պաշտպանություն խղճի ու կրոնի ազատության և ի նպաստ միջազգային հարթակներում ազգային հիմնախնդիրների բարձրաձայնման:

Անդրադառնալով մշակութային ժառանգության արժևորմանն ուղղված նախաձեռնություններին՝ Հայոց Հայրապետը գնահատեց «Save Armenia»-ի մասնակցությունը Անտոնիա Արսլանի «Մշո գիրքը» վեպի արևմտահայերեն թարգմանության շնորհանդեսի կազմակերպմանը: Նորին Սրբությունը, անդրադառնալով «Մշո ճառընտիրի» փրկության պատմությանը, ընդգծեց, որ այն վկայում է ազգային, հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման գործում հայ ժողովրդի աննկուն կամքի մասին, ինչն իր դրսևորումն է գտել նաև մեր օրերում:

Դոկտոր Փոլ Մյուրեյը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունելության համար և ներկայացրեց կազմակերպության ընթացիկ աշխատանքները՝ հավաստիացնելով, որ «Save Armenia»-ն շարունակելու է իր զորակցությունը բերել հայ ժողովրդին ու Հայոց Եկեղեցուն:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը պատասխանեց նաև հյուրերի հարցերին, որոնք վերաբերում էին աշխարհասփյուռ հայության կյանքում Հայոց Եկեղեցու հոգեխնամ ու ազգապահպան առաքելությանը, միջկրոնական հարաբերություններին և Եկեղեցի–պետություն հարաբերություններին:



*Հոկտեմբերի 20-ին*

### Կաթոլիկ եկեղեցու Տրիեստի թեմի հոգևորականներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ուխտավորաբար Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելած Կաթոլիկ Եկեղեցու Տրիեստի թեմի (Իտալիա) հոգևորականներին՝ գլխավորությամբ թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Էնրիկո եպիսկոպոս Թրևիզիի: Հանդիպմանը Էնրիկո եպիսկոպոսը Նորին Սրբությանը ներկայացրեց հյուրերին՝ նշելով, որ ուխտագնացության նպատակն է զորացնալ քրիստոնեական հավատքի մեջ և եղբայրական սիրով զորացյալ ծառայել Ավետարանի քարոզչությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց ներկաներին՝ անդրադառնալով Հայոց Եկեղեցու առաքելությանը, հայ ժողովրդի ազգային ինքնության, մշակույթի կերտման և պահպանման գործում քրիստոնեական հավատքի դերակատարությանը: Նորին Սրբությունը հավելեց, որ հայ ժողովուրդը, մշտապես համախմբված մնալով Եկեղեցու շուրջ, քրիստոնեական իր հավատքով ու լավատեսությամբ հաղթահարել է դարերի փորձությունները: Վեհափառ Հայրապետը նաև գոհունակությամբ խոսեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու միջև սերտ հարաբերությունների ու տարբեր ոլորտներում արդյունավոր գործակցության մասին՝ ընդգծելով, որ այս այցը ևս եղբայրական այդ կապերի վկայությունն է: Նորին Սրբությունը կարևորեց այսօրինակ ուխտագնացությունները հոգևոր նորոգության և քրիստոնեական համայնքների փոխճանաչողության խորացման գործում:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց հյուրերի հարցերին, որոնք վերաբերում էին միջեկեղեցական հարաբերություններին, արդի ժամանակներում Հայոց Եկեղեցու հոգևոր-կրթական առաքելությանը:



*Հոկտեմբերի 22-ին*

### Կաթոլիկ եկեղեցու Նեապոլի թեմի հոգևորականներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ուխտավորաբար Հայաստան ժամանած Կաթոլիկ Եկեղեցու Նեապոլի թեմի (Իտալիա) հոգևորականներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց հյուրերին՝ գոհունակությամբ խոսելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու եղբայրական հարաբերությունների, ինչպես նաև հայ և իտալացի ժողովուրդների պատմական առնչակցությունների մասին:

Նորին Սրբությունը մասնավորապես անդրադարձավ Սուրբ Գրիգոր Լուսավորչի հանդեպ Նեապոլում դրսևորվող առանձնահատուկ ակնածանքին և սրբի մասունքների պահպանությանը: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը հիշատակեց 2000 թվականին Ս. Հովհաննես Պողոս Բ պապի կողմից Հայոց Եկեղեցուն Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքի ընծայումը, ինչպես նաև սրբի մասունքների վերազետեղման առիթով 2015 թվականին Նեապոլ կատարած իր այցը:

Զրույցի ընթացքում կարևորվեցին հոգևոր սպասավորների փոխայցելություններն ու փորձի փոխանակումը՝ ի նպաստ եղբայրական կապերի ամրապնդման և երկու Եկեղեցիների առաքելության առավել արդյունավորման:

Հյուրերը, շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին ջերմ ընդունելության համար, նշեցին, որ Հայոց Եկեղեցու դարավոր ավանդույթներին ու հոգևոր ժառանգությանը հաղորդակից դառնալու ցանկությունն է իրենց առաջնորդել Հայաստան, և ներկայացրին սրբավայրեր այցելություններից ստացած իրենց տպավորությունները:

Հանդիպմանը Նորին Սրբությունը նաև պատասխանեց ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին հոգևոր-կրթական հաստատությունների գործունեությանը, հոգևորականների պատրաստությանը, Հայոց Եկեղեցու հոգեխնամ առաքելությանը, խորհուրդներին ու ծիսական կյանքին:

Վերջում Վեհափառ Հայրապետը հոգևորականներին մաղթեց Տիրոջ զորակցությունը նրանց հոգևոր ծառայության մեջ:

➥ էջ 2

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

↩ էջ 5



*Հոկտեմբերի 25-ին*

## Անգլիկան եկեղեցու Նորվիչի թեմական առաջնորդին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Անգլիկան Եկեղեցու Նորվիչի թեմական առաջնորդ, COP17 համաժողովին մասնակից Անգլիկան Եկեղեցու պատվիրակության ղեկավար Գրեհեմ Բարհամ Աշեր եպիսկոպոսին:

Հանդիպմանը Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ Հայ Առաքելական և Անգլիկան Եկեղեցիների բարեկամական հարաբերություններին՝ իր գնահատանքը հայտնելով Հայոց Եկեղեցուն ու հայ ժողովրդին ցուցաբերվող զորակցության առնչությամբ:

Հայոց Հայրապետը նաև կարևորեց միջեկեղեցական երկխոսությունն ու գործակցությունը՝ ի խնդիր մարդկության առջև ծառացած մերօրյա մարտահրավերների հաղթահարման: Այս համատեքստում Նորին Սրբությունն ընդգծեց քրիստոնեական հավատքի դերը մարդու հոգևոր ու բարոյական նկարագրի ձևավորման գործում՝ արարչագործության խնամքը դիտարկելով որպես Աստծու և մերձավորի հանդեպ սիրո ու պատասխանատվության արտահայտություն:

Իր հերթին Գրեհեմ Աշեր եպիսկոպոսը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունելության համար՝ փոխանցելով Քենթերբերիի արքեպիսկոպոսի բարեմաղթանքներն ու աղոթական զորակցությունը: Նա կարևորեց երկու եկեղեցիների դարավոր հարաբերությունները ու միջեկեղեցական գործակցությունը՝ իր աջակցությունը հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին և հայ ժողովրդին:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Քենթերբերիի արքեպիսկոպոս Սառա Էլիզաբեթ Մալալիին:



*Հոկտեմբերի 25-ին*

## COP17 համաժողովի ԵՀԽ էկումենիկ պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Երևանում անցկացվող Կենսաբանական բազմազանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովին (COP17) մասնակից Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) էկումենիկ պատվիրակությանը:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարևորեց քրիստոնեական Եկեղեցիների համատեղ հանձնառությունը՝ պահպանելու արարչագործության ներդաշնակությունն ու աստվածապարգև բազմազանությունը:

Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ մարդուն Աստծուց վերապահված է արարչաստեղծ բնության նկատմամբ պատասխանատվություն, որը պետք է արտահայտվի մշտական խնամքով ու հոգածությամբ: Այս առնչությամբ Նորին Սրբությունը շեշտեց, որ բնապահպանական արդի մարտահրավերների հաղթահարմանն ուղղված ջանքերը պետք է ուղեկցվեն հոգևոր և բարոյական արժեքների ամրապնդմամբ, որպեսզի մարդկային գիտելիքներն ու ներուժը ծառայեն բնության խնամքին և պահպանությանը՝ ի բարօրություն ներկա և գալիք սերունդների:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը նաև նշեց, որ նման միջազգային համաժողովներն առիթ են ճանաչելու Հայոց Եկեղեցու պատմությունն ու առաքելությունը և քրիստոնեական հավատքով դարերի փորձությունները հաղթահարած մեր ժողովրդին: Անդրադառնալով միջեկեղեցական հարաբերություններին՝ Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդին և քույր Եկեղեցիներին՝ հայ ժողովրդին ու Հայոց Եկեղեցուն ցուցաբերվող զորակցության համար:

Վերջում հյուրերը շնորհակալություն հայտնեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին ջերմ ընդունելության համար՝ ներկայացնելով պատվիրակության առաքելությունը: Վերջիններս խոսեցին կլիմայական փոփոխությունների, կենսաբազմազանության կորստի և շրջակա միջավայրի աղտոտման հիմնախնդիրների մասին՝ ընդգծելով, որ բնապահպանական ճգնաժամն ունի նաև հոգևոր ու բարոյական արմատներ, ինչը հրամայական է դարձնում Եկեղեցիների ջանքերի մեկտեղումը՝ ի պահպանություն արարչաստեղծ աշխարհի:



*Հոկտեմբերի 27-ին*

## «Արարատ» պարային համույթի անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ֆրանսիայի Հայոց թեմի Իսի-լե-Մուլինոյի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու հովանու ներքո գործող «Արարատ» պարային համույթի անդամներին:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ համույթի գործունեությանը՝ կարևորելով ազգային մշակույթի միջոցով երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակությանը, ազգային ոգու զորացմանն ու ինքնության պահպանությանն ուղղված ջանքերը: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ սփյուռքում նման նախաձեռնությունները նպաստում են համայնքային կյանքի աշխուժացմանը և հայորդիների համախմբմանը ազգային ու հոգևոր արժեքների շուրջ:

Հայոց Հովվապետն իր գնահատանքը բերեց համույթի կայացմանն ու գործունեության իրենց նպաստը բերած բոլոր անձանց՝ հայ պարարվեստը զարգացնելու, նախնյաց մշակութային ժառանգությունը սերունդներին փոխանցելու և արտերկրում հայ մշակույթը ներկայացնելու նախաձախնդրության համար: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարևորեց Հայոց Եկեղեցու հովանու ներքո իրականացվող կրթական ու մշակութային ծրագրերի հայապահպան առաքելությունը՝ անդրադառնալով նաև Մայր Աթոռի հովանու ներքո գործող հայորդյաց տների հետ համագործակցության և համատեղ ծրագրերի իրականացման հեռանկարներին:

Վերջում Նորին Սրբությունը պատգամեց հայորդիներին ամուր պահել կապը Մայր Եկեղեցու հետ, գործուն մասնակցություն բերել համայնքային կյանքին՝ մաղթելով ստեղծագործական նոր ձեռքբերումներ և հաջողություններ:



*Հոկտեմբերի 29-ին*

## Լաս Կասասի սոցիալական արդարության ինստիտուտի տնօրենին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Օքսֆորդի համալսարանի Բլեքֆրայերս Հոլի Լաս Կասասի սոցիալական արդարության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող դոկտոր Հյուգո Սլիմին:

Հանդիպմանը անդրադարձ կատարվեց Հայոց Եկեղեցու հոգեխնամ ու ազգապահպան առաքելությանը, բռնի տեղահանված արցախահայության իրավունքների պաշտպանությանն ու սոցիալական խնդիրներին, ինչպես նաև Արցախի հայկական հոգևոր-մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված քայլերին: Կարևորվեց քրիստոնեական Եկեղեցիների, գիտական շրջանակների և մարդասիրական կառույցների գործակցությունը՝ ի նպաստ մարդու իրավունքների պաշտպանության և սոցիալական արդարության հաստատման:

Զրույցի ընթացքում մտքեր փոխանակվեցին Բլեքֆրայերս Հոլի ու Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի հայոց թեմի միջև համագործակցության ընդլայնման, արցախահայության իրավունքների ու հայկական ժառանգության պաշտպանության վերաբերյալ ակադեմիական հետազոտությունների կազմակերպման և Օքսֆորդում գիտաժողովների անցկացման շուրջ: Քննարկվեցին նաև Բլեքֆրայերս Հոլում հոգևորականների ուսումնառության և հետազոտական աշխատանքի հնարավորությունները:

**Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի**

# Ինչո՞ւ էր Հիսուս խոսում առակներով


## Առակի հոգեբանությունը, հին հրեական ուսուցման ավանդույթը և Ավետարանի պատմությունների փոխակերպող ուժը

Պատկերացնենք մի ուսուցչի, որը ցանկանում է բացատրել արդարության իմաստը: Նա կարող է, իհարկե, սահմանում տալ և կանոններ թվարկել, բայց կարող է և պարզապես պատմել մի վիրավոր մարդու մասին, որի կողքով երկու կրոնական պաշտոնյաներ անտարբեր անցնում են, մինչդեռ օգնության է հասնում ինչ-որ օտարական, որից նման քայլ գուցե չէինք սպասի:

Արդարության «բացատրման» երկրորդ տարբերակի դեպքում ունկնդիրը պարզապես տեղեկություն չէ, որ ստանում է. նա վերանայում է իր պատկերացումները բարու, չարի և մերձավորի մասին:

Հիսուսի բարի սամարացու առակը (Ղուկ. 10.25–37) հենց այսպիսի պատմություն է: Այն ոչ միայն հորդորում է օգնել տառապողին, այլև փոխում է հարցի ուղղությունը՝ հնչեցնելով ոչ միայն «Ո՞վ է իմ մերձավորը» հարցը, այլև «Ինչպե՞ս դու կարող ես մերձավոր դառնալ ուրիշի համար»:

Ահա թե ինչու Հիսուսի առակները շարունակում են հետաքրքրել աստվածաբաններին, գրականագետներին և հոգեբաններին. դրանք ոչ միայն գաղափարներ են վեր հանում, այլև ստիպում են վերանայել սեփական համոզմունքները և իրականությանը նայել նոր տեսանկյունից:



### Ինչ է առակը, և ինչով է այն տարբերվում սովորական խրատից

«Առակ» հասկացության հիմքում համեմատության գաղափարն է: Նոր Կտակարանում գործածված հունարեն παραβολή (պարաբոլէ) բառը կարող է նշանակել համեմատություն, պատկերավոր խոսք կամ կարճ պատմողական օրինակ: Ավետարաններում Հիսուսի առակները հաճախ կառուցված են առօրյա կյանքի ծանոթ իրադարձությունների շուրջ՝ սերմնացանի աշխատանք, կորած ոչխարի որոնում, պարտքի վերադարձ, հողագործություն, ընտանեկան հարաբերություններ կամ հարսանեկան խնջույք:

Առակում գաղափարը չի ներկայացվում միայն վերացական սահմանումով: Այս պարզ պատումներով ստեղծվում է մի փոքրիկ աշխարհ, որտեղ գաղափարը դառնում է գործողություն, իսկ բարոյական ընտրությունը՝ տեսանելի իրադարձություն:

Օրինակ՝ «մարդը չպետք է ագահ լինի» միտքը կարելի է արտահայտել ուղղակիորեն: Սակայն Ղուկասի Ավետարանում Հիսուս պատմում է հարուստ մարդու մասին, որի արտերը առատ բերք են տալիս: Մարդը որոշում է քանդել իր շտեմարանները, ավելի մեծերը կառուցել և իր ապագան ապահովված համարել, բայց նրա կյանքն անսպասելիորեն ընդհատվում է (Ղուկ. 12.16–21):

Պատմությունն ունկնդրին ստիպում է տեսնել հակասությունը. մարդը կարող է իր ունեցվածքի աճը շփոթել կյանքի նկատմամբ լիակատար վերահսկողության հետ: Խնդիրը հարստության գոյությունը չէ միայն, այլև այն թյուր համոզմունքը, թե նյութական ապահովությունը մարդուն ազատում է մահկանացու լինելու իրականությունից:

Այսպիսով՝ առակը չի սահմանափակվում՝ խրատը պատկերավոր դարձնելով: Այն ցույց է տալիս, թե ինչպես է մարդը մտածում, ինչ սխալ ենթադրություններ է հանգում, և ինչ է բացահայտվում, երբ այդ ենթադրությունները բախվում են իրականությանը:

### Ինչպե՞ս է առակը ներգործում մարդու մտածողության վրա

Ժամանակակից ճանաչողական հոգեբանությունը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ, թե ինչու են պատմությունները խոր հետք թողնում մարդու գիտակցության մեջ: Սակայն պետք է տարբերակել գիտականորեն ուսումնասիրված ընդհանուր մեխանիզմները և այն պնդումը, թե Հիսուսը գիտակցաբար կիրառել է ժամանակակից հոգեբանության տեսությունները:

Առակի ներգործությունը կարելի է բացատրել երեք փոխկապակցված գործընթացով:

Առաջին՝ պատմությունը վերացական միտքը դարձնում է որոշակի: «Ողորմած լինել» արտահայտությունը ընդհանուր սկզբունք է, իսկ վիրավոր մարդու կողքին կանգնելը՝ տեսանելի գործողություն: Ընթերցողը կամ ունկնդիրը կարող է պատկերացնել իրավիճակը, հասկանալ կերպարի ընտրությունը և մտովի համեմատել այն իր հնարավոր վարքի հետ:

Երկրորդ՝ առակը ձևավորում է մեր սպասումները: Պատմության սկզբում մենք սովորաբար ենթադրում ենք, թե ինչպես պետք է զարգանան իրադարձությունները: Երբ ավարտը հակասում է այդ սպասումներին, ստիպված ենք վերանայել մեր նախնական գնահատականը: Բարի սամարացու առակում օգնության հասնողի ինքնությունը հենց այդպիսի շրջադարձ է առաջացնում:

Երրորդ՝ առակը մարդուն դնում է բարոյական ընտրության առաջ: Ունկնդիրը կարող է սկզբում դատել պատմության հերոսներին՝ կարծելով, թե ինքն ավելի ճիշտ կվարվեր: Բայց երբ պատմության բարոյական հարցը մոտենում է իր կյանքին, պարզվում է, որ ուրիշին դատելը և սեփական վարքը քննելը տարբեր բաներ են:

Հոգեբանական տեսանկյունից սա կարևոր տարբերություն է: Մարդիկ հաճախ կարողանում են ճանաչել բարոյական սկզբունքը, բայց միշտ չէ, որ կիրառում են այն իրենց որոշումներն ընդունելիս: Պատմությունը կարող է բացահայտել այդ հակասությունը՝ առանց ունկնդրին ուղիղ մեղադրելու:

Այնուամենայնիվ, առակի ազդեցությունը երաշխավորված չէ: Նույն պատմությունը տարբեր մարդկանց մեջ կարող է առաջացնել տարբեր արձագանքներ՝ կախված նրանց փորձից, արժեքներից և մեկնաբանությունից: Պատմություն լսելը ինքնին չի նշանակում, որ մարդը կփոխի իր վարքը: Առակը հնարավորություն է ստեղծում վերանայելու մտածողությունը, բայց չի վերացնում այդ վերանայման համար անհրաժեշտ ներքին աշխատանքը:

### Ինչո՞ւ են Հիսուսի առակները հասկանալի գյուղացուն, բայց դժվար՝ գիտնականի համար

Հիսուսի առակների աշխարհը հիմնականում առօրյա կյանքն է: Սերմնացանը ցանում է, հողագործը սպասում բերքին, հովիվը որոնում է կորած ոչխարին, պարտապանը չի կարողանում վերադարձնել պարտքը, իսկ ընտանիքում ծագում է ժառանգության շուրջ վեճը:

Այս պատկերները պատահական զարդարանքներ չեն: Դրանք կապված են առաջին դարի պաղեստինյան հասարակական, տնտեսական և ընտանեկան իրականության հետ: Առակների միջոցով հնարավոր է պատկերացում կազմել հողի մշակման, պարտքային կախվածության, սեփականության, հյուրասիրության և հասարակական պատվի մասին: Միաժամանակ պետք է հիշել, որ առակը գրական ստեղծագործություն է, ոչ թե առօրյա կյանքի ուղղակի արձանագրություն: Այն պատմական իրականության որոշ կողմեր է արտացոլում՝ դրանք ծառայեցնելով իր գաղափարական նպատակին:

Այստեղ առաջանում է հետաքրքիր հակասություն: Պատմության արտաքին աշխարհը կարող է պարզ լինել, բայց դրա իմաստը՝ բարդ: Հողագործության մասին պատմությունը հասկանալու համար անհրաժեշտ չէ մասնագիտական կրթություն, սակայն հասկանալը, թե ինչու է այդ պատմությունը կիրառվում Աստծու արքայությանը վերաբերող խոսքում, պահանջում է ավելի խոր մեկնաբանություն:

Առակը, հետևաբար, միաժամանակ և՛ հասանելի է, և՛ պահանջկոտ: Այն չի պարտադրում ունկնդրին իմանալ փիլիսոփայական եզրաբանությունը, բայց ակնկալում է, որ նա պատրաստ լինի մտածելու, համեմատելու և իր պատկերացումները վերանայելու:

Այս հատկությունը կարևոր էր բանավոր մշակույթի պայմաններում: Կարճ պատմությունները, պատկերավոր հակադրությունները և հիշվող ավարտները կարող էին փոխանցվել ու պահպանվել ունկնդիրների հիշողության մեջ: Սակայն բանավոր փոխանցումը չի նշանակում, թե Ավետարաններում առակները պահպանվել են՝ առանց որևէ փոփոխության: Ավետարանիչները դրանք ներկայացրել են իրենց երկերի գրական և աստվածաբանական համատեքստում: Նույն կամ նմանատիպ նյութը տարբեր Ավետարաններում կարող է տարբեր շեշտադրումներ ստանալ:

### Ինչո՞ւ է առակը երբեմն բացահայտում, իսկ երբեմն՝ թաքցնում ճշմարտությունը

Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ Մարկոսի Ավետարանի չորրորդ գլխին: Երբ աշակերտները հարցնում են սերմնացանի առակի նշանակության մասին, Հիսուսի պատասխանը կապում է առակները Աստծու արքայության խորհրդի և լողների ընկալման հետ (Մարկ. 4.10–12): Այս հատվածը մեկնաբանության բարդ խնդիրներից է, քանի որ խոսում է ոչ միայն հասկանալու, այլև չհասկանալու մասին:

Եթե առակները նախատեսված լինեին միայն ամեն ինչ հնարավորինս պարզ բացատրելու համար, ապա այս հատվածը դժվար կլիներ բացատրել: Ինչո՞ւ պիտի ուսուցիչն ընտրեր այնպիսի խոսք, որը տարբեր ունկնդիրների մեջ կարող է ավելի շատ հարցեր առաջացնել:

Գիտական գրականության մեջ այս հարցին մեկ ընդհանուր պատասխան չկա: Մի մոտեցմամբ՝ առակը բացահայտում է ճշմարտությունը նրանց համար, ովքեր պատրաստ են լսելու և խորհելու, բայց միաժամանակ բացահայտում է նաև ունկնդրի «փակվածությունը»: Մյուս մեկնաբանություններն ավելի մեծ ուշադրություն են դարձնում Մարկոսի Ավետարանի դատաստանի թեմային՝ առակը դիտարկելով որպես խոսք, որը ոչ միայն ուսուցանում է, այլև բաժանում է արձագանքները: Հետազոտողները քննարկում են նաև, թե որքանով է այս շեշտադրումը կապված Հիսուսի պատմական ուսուցման և որքանով՝ Ավետարանի վերջնական գրական ձևի հետ:

Սա թույլ չի տալիս պնդել, թե Հիսուսը ցանկացել է մարդկանցից թաքցնել ճշմարտությունը: Ավելի խելամիտ է ասել, որ Ավետարաններում առակը ներկայացվում է որպես երկակի գործողություն. այն կարող է բացել նոր իմաստի ճանապարհ, բայց նաև ցույց տալ, որ լսելը դեռևս նույնը չէ, ինչ հասկանալը կամ ընդունելը:

Այդ տարբերությունը կարևոր է նաև մեր օրերում: Մարդը կարող է լսել նույն խոսքը, ինչ մեկ ուրիշը, բայց ընկալել այն բոլորովին այլ կերպ: Երբեմն խնդիրը տեղեկության պակասը չէ, այլ այն, որ նոր միտքը վիճարկում է արդեն ձևավորված համոզմունքները, շահերը կամ ինքնապատկերը:

### Առակի ամենաուժեղ հնարքը. անսպասելի շրջադարձը

Հիսուսի առակներից շատերում պատմության հիմնական իմաստը բացահայտվում է ոչ թե սկզբում, այլ այն պահին, երբ իրադարձություններն ընթանում են սպասվածից տարբեր ուղղությամբ:

Դիտարկենք երեք օրինակ:

***Բարի սամարացին (Ղուկաս 10.25–37)***

Սամարացիների և հրեաների միջև կրոնական ու հասարակական հակասություններ կային: Այդ պայմաններում վիրավորին օգնության հասնող սամարացու կերպարը խախտում է ունկնդրի հնարավոր սպասումները: Առակը բարոյականությունը ինքնության և պատկանելության հարցից տեղափոխում է դեպի իրական գործողություն: Մարդու բարոյական արժեքը բացահայտվում է ոչ միայն նրանով, թե ինչ է դավանում կամ ինչ խմբի է պատկանում, այլև նրանով, թե ինչպես է արձագանքում ուրիշի տառապանքին:

***Անառակ որդին (Ղուկաս 15:11–32)***

Կրտսեր որդին վատնում է ժառանգությունը և վերադառնում տուն՝ ընդունելով իր ձախողումը: Սակայն պատմության կենտրոնական լարվածությունն առաջանում է ոչ միայն նրա վերադարձից, այլև հոր արձագանքից և ավագ որդու դժգոհությունից: Ունկնդիրը ստիպված է հարցնել՝ արդարությունը մի՞շտ է նշանակում յուրաքանչյուրին տալ այն, ինչին արժանի է, թե՞ ներողամտությունը կարող է բացահայտել արդարության ավելի խոր չափում: Պատմությունը ցույց է տալիս, որ բարոյապես ճիշտ թվացող դիրքորոշումը կարող է թաքցնել նախանձը կամ ուրիշի ուրախությունը կիսելու անկարողությունը:

➥ էջ 4

# Կորսված սրբության հետքերով

*Ուխտի տապանակի իրական պատմությունը*

Ուխտի տապանակը խորհրդանշում է Աստծու ներկայությունը հին իսրայելական կրոնում կամ հուդայականության մեջ: Եբրայերեն երկու բառ կա, որ թարգմանվում են «տապան». մեկը գործածվում է «հին Իսրայելի ամենասուրբ պաշտամունքային առարկա» իմաստով, որ հավանաբար սկզբում ինչ-որ տեսակի արկղ էր, իսկ մյուսը մատնանշում է Նոյի կառուցած նավը: Սուրբ տապանից բացի՝ այն վերաբերում է նաև տաճարում գտնվող նվիրատվության արկղին (Դ Թագ. 12:10, Բ Մնաց. 24:8, 10, 11), ինչպես նաև Հովսեփի սարկոֆագին (Ծննդ. 50:25–26): Աստվածաշնչում տապանի մասին հիշատակումները տարբեր ձևակերպումներով տեսնում ենք 195 անգամ:

## Աստծու տապան

Տապանը սովորաբար կապված է աստվածային որևէ անվան հետ՝ «Աստծու տապան», «Իսրայելի տապան», «ամբողջ երկրի Տիրոջ տապան»: Այս անվանումների մեծ մասը՝ Երկրորդումն Օրինաց, մնացածը Մնացորդաց գրքերում է: Ա Թագ. 4–6-րդ գլուխներից իմանում ենք, որ տապանը կապված էր աստվածային անվան հետ՝ «Զորքերի Տեր Աստված, որ նստած է քերովբեների վրա» (Ա Թագ. 4:4): Սա առհասարակ տապանակի ամենահին և ամբողջական ծիսական անվանումն է: Որոշ գիտնականներ վիճել են «Աստծու տապանակ» անվանման առաջնահերթության վերաբերյալ (von Rad, PHOE, 115–116)՝ ենթադրելով, որ միայն Սելովում է տապանակի անունը փոխվել, դարձել «Աստծու տապանակ»: Սակայն սա դժվար է ապացուցել: Դժվար է հաստատել նաև այն պնդումը, թե երկու անունները ներկայացնում են տապանի պատմության երկու տարբեր շերտեր: Իրապես, աստվածային երկու անունների համադրումը (օրինակ՝ Բ Օր. 10:8, 31:9, Հեսու 3:3, Գ Թագ. 2:26) և երբեմն անունների թարգմանությունը (LXX Ա. Թագ. 4:3) ենթադրել են տալիս, որ «Աստծու տապան» և «Յահվեի տապան» անվանումները հավանաբար պետք է դիտարկել որպես փոխարինելի անուններ: Տարբերություններ սովորաբար ոճական են, այլ ոչ թե գաղափարական: Բացառություն է «Իսրայելի Աստծու տապանակ» անվանումը, որի բոլոր 7 կիրառություններն արվում են տապանակի՝ փղշտացիների տարածքում լինելու առիթով (Ա Թագ. 5:7, 6:3): ➥ *էջ 5*









# Ինչո՞ւ էր Հիսուս խոսում առակներով

➥ *էջ 3*

***Փարիսեցին և մաքսավորը (Ղուկաս 18:9–14)***

Մի կերպար ներկայանում է որպես կրոնական պարտականությունները կատարող մարդ, մյուսը՝ որպես մեղավոր, որը ողորմություն է խնդրում: Պատմության շրջադարձն այն է, որ ունկնդրի նախնական գնահատականը չի համընկնում Հիսուսի եզրակացության հետ: Առակը քննադատում է ոչ թե բարեպաշտությունն ինքնին, այլ այն ինքնարդարացումը, որի միջոցով մարդը սեփական արժանիքները դարձնում է ուրիշներին դատապարտելու հիմք:

Այս երեք պատմություններում կրկնվում է նույն գրական բանաձևը. սկզբում ունկնդիրը կարծես գիտի, թե ով է ճիշտ, ով՝ սխալ, ով՝ արժանի, ով՝ անարժան: Բայց հանկարծ պատմությունը խախտում է այդ վստահությունը:

Առակի անսպասելի շրջադարձը պարզապես հետաքրքրություն առաջացնելու միջոց չէ: Այն կարող է բացահայտել մեր մտածողության թաքնված նախապաշարումները: Մենք հաճախ գնահատում ենք մարդկանց ոչ միայն նրանց գործողություններով, այլև մեր նախնական պատկերացումներով՝ նրանց կարգավիճակի, անցյալի կամ պատկանելության մասին: Առակը ստիպում է այդ պատկերացումները համադրել իրականության հետ:

## Արդյոք առակի յուրաքանչյուր մանրուք գաղտնի խորհրդանիշ է

Հիսուսի առակները մեկնաբանելիս տարածված գայթակղություններից մեկն այն է, որ պատմության յուրաքանչյուր առարկայի կամ կերպարի համար առանձին խորհրդանշական իմաստ գտնվի: Այդ մոտեցմամբ նույնիսկ ճանապարհը, ծառը, դրամը կամ հագուստը կարող են վերածվել աստվածաբանական թաքնագրի:

Սակայն գիտական մեկնաբանությունը պահանջում է զգուշություն: Ոչ բոլոր առակներն են այլաբանական կառուցվածք ունեցող պատմություններ, և ոչ բոլոր մանրամասներն են առանձին խորհրդանշական իմաստ անթեղում: Որոշ առակներ կառուցված են մեկ հիմնական հակադրության շուրջ, մյուսներն ունեն ավելի բարդ պատկերային համակարգ: Մեկնաբանելիս պետք է հաշվի առնել պատմության կառուցվածքը, Ավետարանի համատեքստը և առաջին ունկնդիրների պատմական միջավայրը:

Օրինակ՝ Սերմնացանի առակում Հիսուսն Ինքն է տալիս պատմության բացատրությունը (Մարկ. 4.13–20): Այստեղ մեկնաբանության հիմքն արդեն իսկ առկա է բնագրում: Բայց այլ առակների դեպքում անհրաժեշտ է խուսափել յուրաքանչյուր մանրուքի համար կամայական նշանակություն հորինելուց:

Այս հարցում կարևոր է նաև վաղքրիստոնեական մեկնողական ավանդույթը: Եկեղեցու հայրերը հաճախ առակները կարդացել են այլաբանական եղանակով՝ դրանց մեջ բացահայտելով հոգևոր և եկեղեցաբանական իմաստներ: Այդ մեկնաբանությունները քրիստոնեական մտքի պատմության արժեքավոր մասն են, բայց պետք է տարբերակել երկու հարց՝ ինչ կարող էր նշանակել պատմությունը իր սկզբնական պատմական միջավայրում, և ինչպիսի՛ հոգևոր իմաստ է այն ստացել հետագա եկեղեցական ընթերցման ընթացքում: Դրանք կարող են փոխկապակցվել՝ առանց նույնը լինելու:

## Եզրակացություն. առակը ոչ միայն բացատրում է, այլև փոխում է հարց տվողին

Ինչո՞ւ էր Հիսուսը խոսում առակներով: Ոչ միայն այն պատճառով, որ պատմություններն ավելի հեշտ են հիշվում, քան վերացական գաղափարները: Առակը Նրա ուսուցման մեջ ավելի խորքային գործառույթ ունի. այն հոգևոր ճշմարտությունը կապում է առօրյա փորձի հետ, բացահայտում բարոյական հակասությունները և մարդուն մղում ինքնաքննության:

Բարի սամարացու առակը վերանայում է մերձավորի մասին մեր պատկերացումները, անառակ որդու պատմությունը՝ արժանիքի և ներման հարաբերությունը, իսկ փարիսեցու և մաքսավորի առակը բացահայտում է կրոնական ինքնարդարացման վտանգը: Այս պատմությունները շարունակում են արդիական մնալ, քանի որ վեր են հանում մարդկային վարքի կրկնվող հակասությունները:

Առակը ոչ միայն պատասխան է տալիս, այլև փոխում է մարդու դիրքորոշումները, և սրանում է նրա ուժը: «Ո՞վ է մեղավոր» կամ «Ո՞վ է արժանի» հարցերին ավելացնում են ավելի բարդ հարցադրումներ. ինչպե՞ս ենք մենք դատում ուրիշներին, ինչի՞ց ենք խուսափում, և ի՞նչ կբացահայտվեր մեր մասին, եթե հայտնվեինք պատմության հերոսի դերում:

Հիսուսի առակավոր խոսքը հայելի է, որը ոչ միայն ցույց է տալիս մեր դեմքը, այլև փոխում է մեր հայացքը մեր իսկ նկատմամբ: Դրա համար էլ այն չի կորցնում իր արդիականությունը. առակը դիմում է ոչ միայն մարդու գիտելիքին, այլև խղճին, երևակայությանը և սեփական համոզմունքները վերանայելու ներքին մղումին:

**Նարեկ սարկավագ ԳԱՍՊԱՐՅԱՆ**
**Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ**

# Կորսված սրբության հետքերով

↩ էջ 4

Նույն գրական համատեքստում տապանակն ամենից հաճախ անվանվում է «Յահվեի տապանակ» (Ա Թագ. 5:3, 6:1, 7:1): Եթե որևէ նշանակություն պետք է տրվի տապանակի վայրը մատնանշող անվանումներին, ապա դա, անկասկած, այն է, որ տապանակը ներկայացնում է Իսրայելի Աստծու զորությունը՝ Յահվեի «ձեռքը»:

## Ուխտի տապանակ

Այս անվանումը հիշատակված է 40 անգամ, որից 30-ը՝ աստվածային անվան տարբեր ձևերի հետ՝ «Յահվեի ուխտի տապանակ», «Աստծու ուխտի տապանակ», «ամբողջ երկրի Տիրոջ ուխտի տապանակ» և այլն: Բոլոր դեպքերում «ուխտ» եզրույթը կարծես սահմանում է տապանակը: Սակայն այս հասկացությունը ոչ այնքան այն վայրերին է բնորոշ, որտեղ անունը կա, որքան նրանց, որտեղ այն չկա:

## Վկայության տապանակը

«Վկայության տապանակ» անվանումը մեկ հնարավոր բացառությամբ («Հրամանն տուր վկայության ուխտի տապանակը տանող քահանաներին, որ դուրս գան Հորդանան գետից» (Հեսու 4:16), որը սովորաբար ընդունվում է որպես քահանայական մեկնաբանություն), հանդիպում է միայն Տետրատևխոսի քահանայական խմբագրություններում: Եբրայերեն «եդուտ» բառը, որ սովորաբար թարգմանվում է «վկայություն», իրականում «ուխտ»-ի հոմանիշն է: Մենք սա գիտենք եգիպտերենի, աքքադերենի և հին արամերենի համարժեք բառերից: Եբրայական պոեզիայում «եդուտ»-ը զուգահեռաբար գործածված է «բըրիթ» բառի հետ, որը եբրայական բնագրում «ուխտ» բառի սովորական՝ ուղղակի իմաստն է (Սաղմ. 24:10, 132:12): Որոշակի համատեքստերում քահանա հեղինակն օգտագործում է «եդուտ», մինչդեռ մեկ այլ հեղինակ կօգտագործեր «բըրիթ» բառը: Այսպիսով՝ մինչ Երկրորդ Օրենքը Սինայում տրված հուշատախտակներն անվանում է «բերիթի հուշատախտակներ» (Բ Օր. 9:9), «Ելից» գրքում դրանք անվանվում են «վկայության տախտակներ» (Ելք 31:18):

## Հղումներ տապանակին

Հնգամատյանից և պատմական գրքերից դուրս տապանակն անվանապես հիշատակվում է մեկ անգամ՝ Սաղմոսներում (Սաղմ. 131:8), և ևս մեկ անգամ՝ մարգարեական գրքում (Երեմ. 3:16): Սակայն պետք է նշել, որ բանաստեղծական բնագրերում և պաշտամունքային համատեքստերում տապանակը, որն արտահայտում էր աստվածության իրական ներկայությունը, չէր կարող ընկալվել աստվածային անունով կամ որևէ աստվածաբանական եզրույթով: Ինչպես, օրինակ, Միջագետքի աստվածային պատկերները մշտապես չէին կոչվում արձաններ, դրանք պարբերաբար անվանվում էին «աստվածներ»: Այսպիսով՝ Աստծու խորանում բնակվելու մասին հղումը (Բ Թագ. 7:6) հստակորեն պետք է նույնացվի վրանում տապանակի գտնվելու հետ (Բ Թագ. 7:2): Նույն կերպ՝ «Աստծու առաջ» արտահայտությունը հաճախ կարող է հոմանիշ լինել «տապանի առաջ» արտահայտությանը (տե՛ս Բ Թագ. 6:4–5, Հեսու 6:8, Դատ. 20:26–28): Դրա հետ կապված՝ Աստծու ներկայության (եբր.՝ փանիմ) մասին հիշատակումը կարող է նաև ակնարկ լինել տապանին (տե՛ս Թվեր 10:33–35):

Հավանական է, որ Սաղմոս 47:6-ը վերաբերում է տապանակի ընթացքին, չնայած տապանակը անունով չի հիշատակվում (հմմտ. Բ Թագ. 6:15): Սաղմոս 68-ի առաջին տողը նման է Թվեր 10:35-ում եղած հին «Տապանակի երգի» սկզբնամասին և, հնարավոր է, վաղ միապետության ժամանակ տապանակի ընթացքի հետ կապված զոհաբերության տեքստի մի մասն է: Սաղմոս 77:61-ում ակնարկ կա փղշտացիների՝ տապանակի գրավման մասին (Ա Թագ. 4:10–11), բայց տապանակն անունով չի հիշատակվում: Փոխարենը այն կոչվում է պարզապես «նրա զորությունը» և «նրա փառքը»: Այս համարը կրկնում է Սաղմոս 131:8-ում «քո զորության տապանակ» անվանումը: Հետևաբար՝ որոշ գիտնականներ պնդում են, որ «Փնտրե՛ք Տիրոջը և Նրա զորությունը» (Սաղմ. 105:4) կոչը պարունակում է տապանակի վերաբերյալ ակնարկ: Իրապես, Սաղմոսի հենց այս հատվածը հիշատակում է ժամանակագրողը (Ա Մնաց. 16:11)՝ որպես տապանակի երթի հետ կապված զոհաբերության մաս, չնայած երթը տաճարի՝ Սողոմոնի բացելու ժամանակ էր: Նույն պաշտամունքի ժամանակագրողը մեջբերում է Սաղմոս 96-ից, որտեղ գրված է, որ Տիրոջ «Զորությունն ու փառքը» տաճարում են: Պետք է նշել, որ Ա Թագավորաց 4:21–22-ում «փառքը» (kabod) տապանակն է, որտեղ տապանակի գրավումը ողբում են որպես փառքի հեռացումն Իսրայելից: Ընդունված է կարծել, որ Սաղմոս 24-ը պարունակում է «մուտքի պատարագ», որն օգտագործվում է տապանակի երթի ժամանակ:

Նշենք նաև, որ Ուխտի տապանակը համեմատվել է եգիպտական կամ բաբելոնացիների Թամուզի արկղի, Պետրայի աստիճանավոր սրբավայրի, որը հայտնի էր նաև խեթացիների շրջանում, և Մեգիդոյի կերամիկական տաճարների հետ:

## Վրանային սրբավայր

Իր պատմության վաղ շրջանում տապանակը սերտորեն կապված էր աստվածային ներկայության հետ և համարվում էր Աստծու շարունակությունը: Ենթադրվում էր, որ Աստված ներկա է լինում այն ժամանակ, երբ տապանն է ներկա լինում: Տապանակն առաջնորդում էր մարդկանց թափառումների ժամանակ՝ «որոնելով նրանց համար հանգստի տեղ» (Թվեր 10:33): Երբ տապանը շարժվում էր, Աստծուն ուղղակիորեն դիմում էին. «Վե՛ր կաց, Տե՛ր, որ ցանուցիր լինեն Քո թշնամիները և փախչեն Քեզ ատողները Քո առաջից» (Թվեր 10:35):

Տապանակն այն վայրն էր, որտեղ Իսրայելի ցեղերի առաջնորդները փնտրում էին կանխատեսումներ սրբազան պատերազմի համար (Դատ. 20:26–28, Բ Թագ. 5:19,23):

Ըստ Դիոնիսիոս Սիկիլացու՝ կարթագենացիները նաև ունեցել են «սուրբ վրան», որը նրանք իրենց հետ տանում էին մարտի: Այս վրանային սրբավայրի մոտ կար զոհասեղան: Աստվածաշնչում տապանակը վրանի հետ կապելու ավանդույթ կա: Անդրադառնալով փղշտացիների՝ տապանակի գրավմանը (Ա Թագ. 4:1–7)՝ բնագրերից մեկը խոսում է այն մասին, որ Աստված լքել է «Սելովմի խորանը՝ այն վրանը, որտեղ նա բնակվում էր» (Սաղմ. 78:60–61)՝ չնայած Սելովմի սրբավայրը կոչվում է «hakal»՝ «տաճար, պալատ» (Ա Թագ. 1:9):

Մի աղբյուրի համաձայն՝ Դավիթն էր, որ կառուցեց վրան, որի մեջ պահվում էր տապանակը (Բ Թագ. 6:17, Ա Մնաց. 15:1): Նաթանի մարգարեությունը հստակորեն ասում է, որ Աստված չի մնացել տաճարում, այլ շրջել է վրանի և խորանի մեջ (Բ Թագ.7:6):

Հետաքրքրական է, որ Հովսեփոս Փլավիոսը նկարագրում է քերովբեների թևերը, որոնք ծածկում էին տապանակը, «ինչպես վրանի կամ գմբեթի տակ»: Հովսեփոսը նաև հաղորդում է, որ տապանակն ու վրանը միասին են բերվել տաճար: Հրեական ավանդություններից ենթադրելի է, որ վրանն ու տապանակը տաճարից հանվել են Երուսաղեմի կործանման ժամանակ: Տապանակը պարունակող վրանային սրբավայրի ավանդույթը հայտնի է Եբրայեցիներ 9:3-ում, որտեղ ասվում է, որ տապանը «երկրորդ վարագույրի հետևում»՝ վրանում է:

Սողոմոնի տաճարում Ուխտի տապանակը տեղադրված էր ամենաներքին սրբավայրում (դաբիր)՝ քերովբեների բացված թևերի տակ (Գ. Թագ. 8:6–7): Մեկ այլ հատվածում ասվում է, որ քերովբեներից յուրաքանչյուրը 10 կանգուն բարձրություն ուներ, իսկ նրանց թևերի բացվածքը՝ 10 կանգունի լայնություն (Գ Թագ. 6:23–28): Երկու քերովբեները միասին կարծես ինչ-որ գահ անտեսանելի են կազմել Աստծու համար: Տապանակը հստակ կոչվում է «Տիրոջ ոտքի պատվանդան» Ա Մնացորդաց 28:2-ում՝ Դավթի խոսքերով: Սաղմոս 98-ում ասվում է, որ Տերը բազմել է քերովբեների վրա՝ որպես հզոր թագավոր, և մարդիկ կանչվում են երկրպագելու «Նրա ոտքերի պատվանդանի մոտ» (98:5): Տապանակի երթին վերաբերող սաղմոսում նմանատիպ հորդոր է հնչում (131:7):

## Պատմություն: Նախամիապետական շրջան

Տապանակի ծագման ճշգրիտ ժամանակն անհայտ է: Աստվածաշնչյան ավանդույթները մատնանշում են վաղ նախամիապետական ծագում, և ոչինչ չի բացառում դա: Տապանակը կապված է Մովսեսի հետ ոչ միայն ուշ աղբյուրներում, այլև ամենավաղ բնագրերում: Տապանակի երգը (Թվեր 10:35–36) տեղադրված է Մովսեսի առաջնորդությամբ անապատում թափառելու համատեքստում: Իսրայելացիների պարտությանը նույն այս շրջանում վերագրվում է աստվածային աջակցության բացակայությանը. «Ո՛չ Աստծու ուխտի տապանակը, ո՛չ էլ Մովսեսը չհեռացան ճամբարից» (Թվեր 14:44): Տապանակն սկզբից պաշտամունքային և քաղաքական խորհրդանիշ էր. դրա ներկայությունը նշանակում էր Աստծու ներկայությունը: Հեսուի գրքի համաձայն՝ տապանակը ժողովրդին առաջնորդում էր նվաճման ծեսի (Հեսու 3:1–5:1, 6:1–25): Տեքստը գրված չէ որպես նվաճման պատմություն: Երբ տապանակը մտավ Հորդանան, ջրերի հոսքը կանգ առավ և կուտակվեց (հմմտ. Սաղմ. 114): Ծեսի քաղաքական նշանակությունը երբեք կասկածի տեղիք չի տվել. որպեսզի Իսրայելն իմանա, որ Աստված Հեսուի հետ է (Հեսու 3:7), և որպեսզի բոլոր ազգերն իմանան, որ Աստված Իսրայելի հետ է (Հեսու 4:10, 5:1):

Երբ տապանակն անցավ Հորդանանը, Գաղգաղայում սրբավայր հիմնվեց (Հեսու 4:19): Գաղգաղայի սրբավայրի հիմնումից որոշ ժամանակ անց տապանակը տեղափոխվեց: Դատավորաց 2:1-ում «Աստծու հրեշտակի»՝ Գաղգաղայից Բոքիմ բարձրանալու մասին հիշատակումը, ընդհանուր առմամբ, ընկալվում է որպես տապանակի տեղափոխման ակնարկ: Բոքիմի տեղը հայտնի չէ, բայց այն հավանաբար Բեթելի մոտակայքում է, քանի որ Բոքիմ գնալու համար օգտագործված բայը սովորաբար ենթադրում է Բեթել և Բոքիմ: Ամեն դեպքում տապանակը հայտնվեց Բեթելում, որտեղ ցեղային միության առաջնորդները գուշակություն խնդրեցին՝ Բենիամինի ցեղի դեմ սուրբ պատերազմի նախապատրաստվելու համար (Դատ. 20:18): Եվ Գաղգաղան, և՛ Բեթելը Եփրեմի տարածքում էին, ինչպես նաև Սելովը, որոնք որոշ ժամանակ ծառայել են որպես նրա կենտրոնական սրբավայր: Սրբավայրերի այս տեղաշարժը հիշատակվում է Նաթանի մարգարեության մեջ. «Ես շրջել եմ և՛ վրանի, և՛ խորանի մեջ» (Բ Թագ. 7:6): Քահանայական մեկնաբանության համաձայն՝ Սելովում էր, որ հիմնադրվեց «հանդիպման վրանը» (Հեսու 18:1):

Սելովում տապանակը պահվում էր սրբարանում, որտեղ նշվում էր տարեկան տոն (Դատ. 21:19): Սամուելի ժամանակներում տապանակը Հեղիի և նրա ընտանիքի խնամակալության ներքո էր, որոնք իրենց արմատները կապում էին Մովսեսի հետ: Հենց Սելովում էր, որ տապանակն առաջին անգամ կոչվեց «Զորքերի Տեր Աստված, որը նստած է քերովբեների վրա»: Տապանակը շարունակվեց օգտագործվել որպես ռազմական պալադիում: Ըստ Ա Թագավորաց 4–6-ի՝ տապանակը Սելովի մոտ տարվեց՝ մարտնչելու փղշտացիների դեմ: Դա պարտությունից խուսափելու հուսահատ քայլ էր: Սակայն փղշտացիները գրավեցին տապանակը, և երբ այդ լուրը հաղորդվեց Հեղիին, նա տապալվեց գետնին, պարանոցը կոտրվեց, և մահացավ: Տապանակի կորուստը սգացին որպես Աստծու փառքի կորուստ: Ըստ պատմողի՝ տապանակը փղշտացիների տիրապետության ներքո մնաց յոթ ամիս: Վերջապես այն վերադարձվեց, քանի որ մեծ խնդիրներ էր պատճառում փղշտացիներին: Տապանակը 20 տարի մնաց Կարիաթարիմում՝ Եղիազարի որդի Աբինադաբի խնամակալության ներքո (Ա Թագ. 6:21–7:2): Մոռացության մատնվեց Սավուղի օրոք: Մնացորդաց գիրքն ասում է, որ այն անտեսվել է (Ա Մնաց. 13:3), իսկ Սաղմոս 132:6-ը ենթադրում է, որ կորել է: Սավուղի ճշմարտությունը կարող է հաստատվել Ա Թագավորաց 14:18-ով, բայց այդ բնագրում «տապան» բառը սովորաբար սխալմամբ ընդունվում է «եփուդ»-ի փոխարեն (ինչպես ենթադրում են որոշ հուսարեն ձեռագրեր):

## Տապանակի անհետացումը

Ճշգրիտ հայտնի չէ, թե երբ և ինչպես է տապանակը կորել: Աստվածաշունչը լռում է այս հարցի վերաբերյալ: Ըստ ոմանց՝ այն ոչնչացվել կամ տեղափոխվել է միապետական ժամանակաշրջանում՝ Ք. ա. 10-րդ դարում, եգիպտացի Սիսակի ասպատակության հետևանքով (Գ Թագ. 14:25–28), կամ երբ Իսրայելի Հովաս թագավորը կողոպտել է տաճարը Հուդայի պարտությունից հետո (Դ Թագ. 14:8–14), կամ տաճարի՝ Մանասեի սինկրետիստական վերանորոգման ժամանակ (Դ Թագ. 21:4–6): Խնդիրն ավելի է բարդանում այն փաստով, որ տապանակը չի եղել տաճարի ավարի մեջ, որը Նաբուգոդոնոսորը տարել է Բաբելոն, երբ Երուսաղեմը թալանվել էր (Դ Թագ. 25:13–17, Երեմ. 52:17–23): Սա, իհարկե, չի բացառում տապանակի գրավման այլ ամսաթիվ (օրինակ՝ Ք. ա. 597 թ.) կամ դրա այլ ճակատագիր (օրինակ՝ ոչնչացում): Մի քանի ավանդություններ տապանակը վերագրում են Ք. ա. 7-րդ դարի վերջին և 6-րդ դարի սկզբին: Ըստ ժամանակագրի՝ իր մյուս բարեփոխումների հետ մեկտեղ Հովսիան հրամայել է, որ «սուրբ տապանակը» տեղադրեն տաճարում, քանի որ ասվում է. «Դուք կարիք չունեք ձեր ուսերի վրա» (Բ Մնաց. 35:3): Այս բնագիրը դժվար և խնդրահարույց է: Ժամանակագիրը կարծում էր, որ տապանակը դեռևս գոյություն է ունեցել Հովսիայի ժամանակ: Հնարավոր է, որ Հովսիան այն վերականգնած լինի, երբ հանվել էր Սրբարանից (հավանաբար Մանասեի ժամանակ) և պահվել է ժամանակավոր ապաստարաններում: Ամեն դեպքում Երեմիան խոսեց «Ուխտի տապանակի» նկատմամբ չափազանց վստահության դեմ:

Տապանակի ներկայությունը տաճարում մարդկանց կեղծ անվտանգության զգացում էր տալիս իրենց մեջ Աստծու մշտական ներկայության վերաբերյալ: Երեմիան հայտարարել է, որ մարդիկ այլևս չեն հիշի տապանակը, չեն այցելի կամ չեն վերակառուցի այն: Որոշ հրեական ավանդությունների համաձայն՝ բաբելոնացիները հանել են ոսկե, արծաթե և բրոնզե անոթները, բայց Երեմիան հանել է տապանակն ու սուրբ տախտակները և դրանք թաքցրել բաբելոնացիներից: Մի տարբերակ էլ կա. Երեմիան թաքցրել է վրանը, տապանակը և խնկի զոհասեղանը լեռան վրա՝ մի քարանձավում, որտեղից Մովսեսը տեսել է Ավետյաց երկիրը (Բ Մակ. 2:4–8):

Մեկ այլ վարկածի համաձայն՝ Հովսիան տապանակը թաքցրել է ժայռի տակ՝ իր տեղում: Ըստ մի լեգենդի՝ Երուսաղեմի կործանման ժամանակ մի հրեշտակ իջել է երկնքից և սրբազան անոթները հանել տաճարից: Ավելի հավաստի է տաճարի պղծման և թալանման մասին ողբը Առաջին տաճարի կործանման ժամանակ: Պարզվում է, որ տապանակը չի վերակառուցվել երկրորդ տաճարի համար: Երեմիան հայտարարել է, որ այն չպետք է վերակառուցվեր (Երեմ. 3:16): Եզեկիելի նոր տաճարի տեսիլքում (Եզեկ. 40–48) տապանակի մասին ոչ մի հիշատակում չկա: Այն տեղում, որտեղ պետք է կանգնած լիներ տապանակը, փոխարենը կար 3 մատնաչափ հիմքի քար: Ըստ Հովսեփոսի՝ երբ Պոմպեոսը Ք. ա. 64 թ. ներխուժեց տաճար, հռոմեացիները տեսան սրբազան առարկաները, որոնք Հովսեփոսը թվարկում է՝ առանց տապանակը հիշատակելու:

**Ալբերտ սրկ. ՍԱՀԱԿՅԱՆ**
**Արմեն ՍԱՀԱԿՅԱՆ**

# Նապոլեոնը Քրիստոսի և Ավետարանի մասին

*Ինչ օգուտ կունենա մարդ, եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի: Կամ մարդ իր անձի փոխարեն ի՞նչ փրկանք պիտի տա:*

*Մատթ. 16.26*

Իսկապես, հակասական և բարդ են Նապոլեոն Բոնապարտի նկարագիրն ու գործերը, որոնք մարդկության պատմության վրա խոր հետք են թողել: Տարաբնույթ են նաև պատմաբանների և առանձին հեղինակների՝ նրան տված գնահատականները՝ ազգային հերոսից, բարեփոխիչից ու օրենսդրից մինչև անագորույն բռնակալ ու չար հանճար, զավթողական պատերազմների հետևանքով միլիոնավոր մարդկանց և Եվրոպայի ժողովուրդներին ցավ ու դժբախտություն պատճառած հակահերոս:

Նապոլեոնը սերում էր աղքատ ազնվական փաստաբանի ընտանիքից, ուստի և խանդավառությամբ է ընդունում Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, որ տապալում է բացարձակ միապետական կարգերը և երկիրը հանրապետություն հռչակում: Իսկ ներքին միապետական ընդվզումների և հարևան միապետների ինտերվենցիայի ժամանակ իր ռազմական հանճարը ներդնում է հեղափոխության նվաճումները պաշտպանելուն ի խնդիր՝ քսանչորս տարեկանում հրետանավոր սպայից բրիգադային գեներալի կոչման արժանանալով, ապա և իտալական արշավանքի ժամանակ ֆրանսիական զորքերի գլխավոր հրամանատար նշանակվելով: Օգտվելով երկրում տիրող խառնաշփոթ վիճակից՝ բուրժուական որոշ շրջանակների և իրեն հավատարիմ սպաների ու զինվորների աջակցությամբ Նապոլեոնը 1799 թ. նոյեմբերի 9–10-ին ռազմական հեղաշրջմամբ զավթում է իշխանությունը՝ փաստորեն դավաճանելով հանրապետության հռչակած դեմոկրատական սկզբունքներին: Նա ցմահ հռչակվում է կոնսուլ՝ անսահման իշխանությամբ, իսկ 1804 թվականին՝ կայսր: Իր հմառ կամքով, դաժանությամբ ու անսանձ փառասիրությամբ Նապոլեոնը փորձում է ողջ Եվրոպան նվաճել, բայց ի վերջո պարտվում է, գահընկեց արվում և մահկանացուն կնքում աքսորավայրում՝ անգլիական Սբ. Հեղինե կղզում՝ ցավերի մեջ գալարվելով:

Բազմատաղանդ Նապոլեոնի անմիջական մասնակցությամբ կազմվել են բուրժուական հասարակության իրավական կանոնները հաստատող քաղաքացիական, քրեական և առևտրական օրենսգրքերը, որոնք՝ որպես հիմնարար օրենսդրական փաստաթուղթ, միայն որոշ փոփոխություններով ու լրացումներով, ցայսօր գործածվում են Ֆրանսիայում և բազմաթիվ երկրներում իրավաբանական կրթության ուսումնական ծրագրերի մաս են կազմում՝ որպես իրավաբանական ձևակերպումների ու մտածողության չափանիշ, անձի և հասարակության շահերը հավասարակշռող սկզբունքներ: Ինքը՝ Նապոլեոնը, այս օրենսգրքի մասին ասել է. «Քառասուն հաղթած ճակատամարտերը չեն, որ ինձ իրական փառք բերեցին. Վաթեռլոյի [ճակատամարտում կրած պարտությունը] մոռացության կմատնի այդ հաղթանակների հիշողությունը: Այն, ինչ անջնջելի կմնա և հավերժ կապրի, իմ «Քաղաքացիական օրենսգիրքն» է»:

Նապոլեոնն արտասովոր մտավոր կարողությունների տեր էր, օրինակ՝ միաժամանակ կարող էր և՛ ընթերցել կարևոր փաստաթղթեր, և՛ քարտուղարին ինչ-ինչ տեքստեր թելադրել, անգամ միաժամանակ յոթ տարբեր նամակներ թելադրել: Ինքնակրթության շնորհիվ խոր գիտելիքներ ուներ փիլիսոփայության, պատմության և մանավանդ պետական կառավարման բնագավառներում և ձգտում էր կյանքի կոչել Լուսավորության դարաշրջանի իդեալները: Պակաս նշանակալից չեն նաև նրա ռազմավարական նորամուծությունները:

Նապոլեոնն օրական միջին հաշվով քնում էր 3–4 ժամ՝ մնացյալ ժամանակ անխոնջ աշխատելով: Օժտված էր առաջնորդի խարիզմատիկ հատկություններով. իր ռազմական հանճարի և համարձակության շնորհիվ մեծապես վայելում էր զինվորների և սպաների հարգանքը: Առհասարակ նա բարձր էր գնահատում առաջնորդի դերը



կյանքի բոլոր ոլորտներում. *«Առյուծի գլխավորած ոչխարների զորքը կհաղթի ոչխարի գլխավորած առյուծների զորքին»:*

Սակայն առանձնահատուկ հետաքրքիր և ուսանելի է Նապոլեոնի կրոնական հայացքների շրջափոխությունը: Երիտասարդ տարիքում նա հարուստ էր դեիզմին (այս ուսմունքի հետևորդները հավատում էին Աստծու գոյությանը, բայց չէին ընդունում նախախնամությունն ու երկնային միջամտությունը երկրային գործընթացներին, ինչն աթեիզմից ընդամենը կես քայլ է հեռու) և մեծապես կրում էր իր հայրենակից Վոլտերի և այլոց գաղափարական ազդեցությունը: Ֆրանսիական հեղափոխության տարիներին, ինչպես և ուրիշ շատ սպաներ, Նապոլեոնը բացասական վերաբերմունք է ունեցել Եկեղեցու նկատմամբ՝ այն համարելով հին աշխարհի միապետության անբաժան մաս: Հայտնի է նրա՝ սկեպտիցիզմով լի խոսքերից մեկը՝ խոստովանված գերմանացի գրող Վիլանդին. «Ամենևին չեմ հավատում, որ երբևէ գոյություն է ունեցել Հիսուս Քրիստոս»:

Սակայն իշխանության գալով՝ Նապոլեոնը շատ արագ հասկանում է կրոնի դերն ու նշանակությունը՝ որպես կառավարման հզոր լծակ: Նա փորձում էր կրոնը (ինչպես և ամեն ինչ, մինչև իսկ կանանց ու սիրուհիներին) օգտագործել իր քաղաքական դիրքերն ամրապնդելու համար: «Ոչ մի հասարակություն,– ասում էր Նապոլեոնը,– չի կարող գոյություն ունենալ առանց կրոնի. առանց կրոնի՝ լավ բարոյականություն չկա, հետևաբար՝ միմիայն կրոնն է, որ կարող է պետությանը ամուր ու տևական հիմք տալ: Առանց կրոնի հասարակությունը նման է առանց կողմնացույցի նավի»:

Ընդսմին՝ Նապոլեոնը փորձում էր իրեն ենթարկել Եկեղեցին: Այդ է վկայում 1801 թ. նրա և Հռոմի պապ Պիոս VII-ի միջև կնքված համաձայնագիրը, ըստ որի՝ կաթոլիկությունը ճանաչվում էր որպես ֆրանսիացիների մեծամասնության կրոն, բայց ոչ պետական կրոն, այսինքն՝ պահպանվում էր դավանանքի ազատությունը: Պետությունն ինքն է նշանակում բարձրաստիճան հոգևորականներին, ֆինանսավորում եկեղեցին, իսկ կղերականությունը պետությանը հավատարմության երդում է տալիս: Երբ Հռոմի պապը դատապարտեց ֆրանսիական զորքերի կողմից Նեապոլիտանական թագավորության գրավումը, Նապոլեոնը հրաժարվեց ապահարզանագիր տալ նրան թագուհի հռչակված Ժոզեֆինայից բաժանվելու վերաբերյալ: Պապը հանդիմանեց Նապոլեոնին եկեղեցական գործերին միջամտելու համար, և կայսրը հանդգնեց բանտարկել Աստծու օծյալ սպասավորին:

Բայց և, իրավամբ, ո՛վ կմտածեր, որ երբեմնի դեիստ և փառասեր բռնակալը երբևէ զղջման խոր ու անկեղծ ապրումներ կունենա և Փրկչի ու Նրա Ավետարանի մասին այսքան խորիմաստ ու սրտառուչ խոսքեր կասի. «Օ՜, խորություն Աստծու հարստության, իմաստության և գիտության: Ինչքա՜ն անքննելի են Նրա դատաստանները, և անզննելի՝ Նրա ճանապարհները» (Հռոմ. 11.33):

Նապոլեոնը, փաստորեն, հիշեց Աստծուն այն ժամանակ, երբ գահընկեց էր եղել և իր կյանքի վերջին օրերն էր անցկացնում անգլիական Սբ. Հեղինե կղզու աքսորավայրում: Նա այնտեղ էլ գրի առավ իր հուշերն ու մտքերը: Իսկ թե ինչ խորությամբ էին համակել գահընկեց կայսերն այդ մտքերը, վկայում է նրա զրույցը իր հետևից Սբ. Հեղինեի աքսորավայր գնացած գեներալ Մոնտոլոնի հետ:

*— Ի՞նչ եք մտածում Քրիստոսի մասին,–* հարցնում է Նապոլեոնը:

Մոնտոլոնը պատասխանում է.

*— Տե՛ր իմ, պետք է խոստովանեմ, որ երբեք չեմ մտածել, երբեք չեմ խորհրդածել այդ հարցի շուրջ:*

*— Ավելի վատ՝ Ձեզ համար,–* ասում է երբեմնի գահակալն ու սկսում շարադրել իրեն վաղուց անհանգստացնող մտքերը:

*«Իմ փառքի օրերին ես այնքան մեծ հարգանք էի վայելում մարդկանց մեջ, որ նրանցից շատերն ուրախությամբ ինձ համար կմահանային: Բայց, այդուհանդերձ, իմ ներկայությունն անհրաժեշտ էր զինվորներին, որպեսզի ոգեշնչվեին մահվան գնալու համար: Իսկ այժմ, երբ Սբ. Հեղինե կղզում եմ, ո՛վ ինձ համար կկռվի, ո՛վ ինձ հավատարիմ կմնա: Այսպիսին է մեծ մարդկանց ճակատագիրը: Ի՛նչ խոր վիհ է ընկած իմ անկման ու Աստծու Որդու հավիտենական իշխանության միջև: Ես տակավին չեմ մահացել, սակայն իմ գործն արդեն իսկ տապալված է, այնինչ Քրիստոս մահացավ 19 դար առաջ, իսկ Նրա գործը գոյություն ունի, ինչպես այն օրերին, երբ Նա քայլում էր այս երկրի վրա: Նրա մտքով իսկ չէր անցնում մահից վախենալ. Նա մահվանն անխռով սրտով էր սպասում: Մեն-միայնակ՝ Նա մահից հետո էլ կենդանի և զորեղ մնաց: Աշխարհի գրեթե բոլոր ծագերում քարոզվում է Նրա խոսքը. Հիսուսին սիրում են և առ Նա աղոթում... Ալեքսանդր Մակեդոնացին, Հուլիոս Կեսարը, Կառլ Մեծը և ես՝ մենք բոլորս, հզոր պետություններ հիմնադրեցինք, սակայն ինչի՞ վրա էր խարսխված մեր իշխանությունը: Ուժի: Հիսուս Քրիստոս սիրո վրա հիմնեց Իր արքայությունը, և այսօր էլ հազարավոր մարդիկ ուրախությամբ իրենց կյանքը կտան հանուն Նրա:*

*Հիսուսը նվաճող է, Որ ճշմարտապես Իր հետ միավորում է ոչ միայն մեն-մի ժողովրդի, այլև ամբողջ մարդկությանը: Ի՛նչ հրաշք է: Մարդու հոգին, իր բոլոր զորություններով հանդերձ, սերտ կապ է զգում Հիսուսի գոյության հետ: Իսկ ինչպե՞ս: Շնորհիվ մի հրաշքի՝ մյուս բոլոր հրաշքներից գերազանց: Քրիստոս սեր է, և Նա կամենում է այդ սերը շնորհել մարդկանց ու նվաճել նրանց սրտերը. դա հենց այն է, ինչ կամենում է Նա:*

*Եվ մարդիկ Նրան են տալիս իրենց սրտերը: Բոլոր նվաճողներն էլ, իրենց տաղանդով հանդերձ, տապալվեցին, բայց չէ՞ որ նվաճելով աշխարհը՝ նրանք ոչ մի բարեկամ էլ ձեռք չբերեցին: Հաղորդակցությունը, որ Հիսուս Քրիստոսին միավորում է Իրենով փրկվածների հետ, ամենասուրբ ու ամենազորեղ աղերսն է.... Եվ հենց դա է, որ ամենից առաջ ինձ հիացմունք է պատճառում, և որքան շատ եմ այդ մասին խորհրդածում, այնքան առավել եմ հակվում Քրիստոսի աստվածությունն ընդունելու. ես վստահ եմ, որ Քրիստոս միայն մարդ չէր, այլև Աստված էր և է»:*

Զարմանալի են նաև երբեմնի բռնակալի խոսքերն Ավետարանի մասին.

*«Ավետարանն ունի խորհրդավոր մի ուժ, ինչ-որ զարմանահրաշ զորություն և ջերմություն, որ ներգործում է մտքի վրա և դյութում սիրտը: Նրա մասին խորհրդածելիս համոզվում ես, որ խոսքը երկնքի մասին է: Ավետարանը գիրք չէ, այլ մարդկային էակ, գործունեություն է ու զորություն, որ պարտության է մատնում այն ամենը, ինչ ցանկանում է խոչընդոտել նրա տարածմանը: Երբ սեղանի վրա է այս արտոնյալ գիրքը, ես չեմ հոգնում այն կարդալուց և միշտ նույն հաճույքով եմ ընթերցում:*

*Քրիստոս չի փոխվում, չի հապաղում Իր ծրագրերն իրագործելիս. Նրա ամենասովորական խոսքն անգամ դրոշմված է պարզության և խորության կնիքով, որ գերում է թե՛ տգետին և թե՛ իմաստունին, եթե միայն ուշադրությամբ կարդան այն: Անհնար է որևէ այլ տեղում գտնել նման գեղեցիկ մտքեր, նման բարոյական կանոններ, որոնք երկնային մեծ զորքի նման հետ են մղում բոլոր հարձակումները, մեր հոգում արթնացնում այնպիսի զգացողություն, որն ապրում ես չքնաղ գիշերը՝ անթիվ աստղերով ընդելուզված պարզկա երկինքը զննելիս: Մեր միտքը ոչ միայն կլանվում է այդ գրքի ընթերցանությամբ, այլև նրա միջոցով դառնում տիրական, իսկ հոգին այս գրքով ձերբազատվում է մոլորեցնող ամեն վտանգից:*

*Մեր հոգիների Տերը մեր հանդեպ տածած Իր սիրո պատճառով է շնորհել մեզ Իր Ավետարանը: Հենց Ինքն էլ մեր Ընկերը, Հայրը և մեր ճշմարիտ Աստվածն է: Իր կրծքի երեխայի նկատմամբ մայրն ավելի հոգատար չէ, քան մեր Տերն ու Թագավորը՝ մեր հանդեպ: Ավետարանի թովչանքով հմայված հոգին այլևս ինքն իրեն չի պատկանում: Աստված իսկույն ևեթ տիրում է նրան: Նա տնօրինում է նրա բոլոր խորհուրդները և ունակություններ, որոնք այլևս Իրենն են:*

*Քրիստոսի աստվածության ինչպիսի՜ ապացույց: Իր անսահման արքայության մեջ Նա հետապնդում է լոկ մեկ նպատակ՝ մարդկանց բարոյական կատարելագործումը, խղճի մաքրությունը, հոգու սրբությունն ու միությունն այն ամենի հետ, ինչ ճշմարիտ է»:*

Մեզ համար, անշուշտ, լրջորեն խորհելու առիթ են պատմության ամենաազդեցիկ և հակասական դեմքերից մեկի այս արտասովոր խոստովանությունները, որոնց նա հանգել է արդեն կյանքի վերջին տարիներին՝ աշխարհից բոլորովին լքված ու մոռացված:

**Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆ**

# Արամ Հայկազի «Տիոնիկը» ողբերգական պատումը


Արամ Հայկազը, գրական առաջին քայլերից սկսած, անդրադարձել է Մեծ եղեռնի թեմային՝ որպես իր կյանքից առանձին դրվագների, իր ծննդավայր Շապին Գարահիսարի պատմության հերոսական ու ողբերգական էջերի, որպես ականատեսի վկայության ու անմոռաց ապրումների և վերջապես՝ որպես կատարված ոճիրի հաստատման՝ հակառակ ոճրագործի՝ դեպքերի ընթացքը փոփոխելու ու հետևանքները հերքելու ջանքերի: Այս ամենին գումարեք կենդանի մնալու «մեղքի» ծանր զգացումը և ապրել շարունակելու պարտա-վորու-թյունը... Հայ մարդու այս զգացումները բախվում են եղեռնագործի անզիջող համառու-թյանը, աշխարհում իշխող անարդարությանն ու քաղաքակիրթ կոչվող մարդկության համառ լռությանը, ինչի խայտառակ դրսևորումները հաճախ հասնում են զոհին ու մարդանման բորենի գոյակներին «շփոթելուն»:

Եթե փորձեմ թվարկել Արամ Հայկազի անդրադարձներն այս թեմային, պարզապես ստիպված կլինեմ գրեթե կրկնել նրա ստեղծագործությունների մատենագիտական երկար ցանկը, որ կազմել ու դեռ չեմ հրատարակել գրքով: Բայց նրա մի գործի՝ «Տիոնիկը» պատմվածքին, պարտավոր եմ հատուկ անդրադառնալ՝ որպես ոչ միայն Սփյուռքի, այլև 20-րդ դարի հայ գրականության ամենաճշանավոր էջերից մեկին:

Տառադարձման ինչ-որ անհայտ օրենքով՝ հերոսի Դամիանոս անունը դարձել է Տիոնիկ, որին գյուղում բոլորն են ճանաչում, բայց «ոչ ոք չէր հասկնար անոր հոգին, անոր լեզուն, անոր խօսքերուն ու շարժումներուն իմաստը, ինչպէս շուները, որոնք իր մտերիմներն ու սրտակից բարեկամներն էին ամէն ատեն, մանաւանդ երբ գինով էր կամ «շէն»»: Սա իր բառն է եւ «կը բնորոշէր» այն «երանաւէտ վիճակը», որին հերոսը հասնում էր «սուրբերու կանթեղին ձէթ դնող մեկու մը բարեպաշտութեամբ»:

«Հոգիով բարի ու մանուկ» մնացած Տիոնիկը ծույլ չէր. վաստակը տուն էր բերում, երբ լսեց առաջին նախատինքը մուրացող մոր մասին: Նա լքեց հայրական տունը և ապրում էր «երկու ձեռքերը մէկ բերանին համար պիտի աշխատէին» սկզբունքով. կյանքը վերածվեց ծանր ֆիզիկական աշխատանքի, օղուց ու շներին կերակրելու հոգսի խճանկարի, որից անպակաս էին գյուղական կյանքի մեծ ու փոքր ուրախությունները: Տիոնիկն ազգին ու ազգային գործերին ծառայելու համար պատրաստ էր ամեն հանձնարարություն: Գյուղից ոչ հեռու գահավիժող Յոթնաղբյուրի անմահական ջուրը խմողը «կամ խենթ կ'ըլլար, կամ ազգասէր»,– արձանագրո՞ւմ, թե՞ բացատրում է Արամ Հայկազը. Տիոնիկը համատեղում էր խենթությունն ու ազգասիրությունը:

Կրկնվում է Համաստեղի «Անձրև» պատմվածքից ծանոթ պատկերը. «Երբ անձրեւները կ'ուշանային, ու ցորենի արտերը, հազիւ հասակ նետած, կը դեղնէին՝ գլուխնին պատեաններու բանտէն չազատած, ու մեծ առուն կը քշշուէր, կը կծկտէր, որ նիհարնար ու մատ մը քալող ժապաւէն կը դառնար իր կաւէ անկողնին մէջ, գեղացիք իրար կ'անցնէին...»:



Կրկնվում է նաև հորդ անձրևի տեսարանը, որին համադրվում է հերոսի հրճվանքը.

— Տո՛ւր, Աստո՛ւած, տո՛ւր օխտն օր, օխտը գիշեր աղքատին արտին, հարուստին ամբարին, տո՛ւր, Տէր, տո՛ւր:

Եւ արտերը ցածալ կը սկսէին:

Պատերազմը դատարկեց գյուղը. տղամարդկանց ռազմաճակատ տարան: Գյուղի հույսը մնաց Տիոնիկը. «Ազգը քեզի կը նայի» կոչ-հրահանգը Տիոնիկին դարձրեց վանքի հոտի հովիվ. մորն ու եղբորը հրաժեշտ տալուց հետո վանքի շների հետ գործի անցավ: Հեռավոր լեռներում Տիոնիկի «մենակութեան ցաւը» մեղմում էր սրինգի հուզաթաթախ երգը, իսկ զրուցընկերն Ասլանն էր՝ գայլխեղդ շունը, որ Չալըմի հետ հալածում էր գայլերին: Հովվի ու շան զրույցը հաճախ Շողիկի մասին էր:

Աշնանը երազանքը կարող էր իրականանալ, եթե հրացանների որոտից անտառները չդողային ու չսգային, իսկ դաշտերից չանհետանային հովիվներն ու հոտերը. նախկին շեն գյուղից մնացել էր մի կաղ ոչխար... Հիմա կենսուրախ օրերը, չինարի ծառը, շները, օղետան հին ընկերները, ազգն ու Շողիկը հուշ-հիշատակ են, որոնց կորուստը Տիոնիկը սգում է «յորդ, խոշոր կաթիլներով»: Լեռների ու անտառի հետ մենակ մնացած հովիվն «անուժ, յոգնած» ոտքերով գյուղ է իջնում, տեսնում գյուղի ավերակները, շների դիակները, հայից խլած գյուղում ապրող թուրքերին ու գտնում մարդու պես կորուստները սգացող Ասլանին...

Կերպարանափոխված մարդու և շան բարեկամությունը զարմացնում է թուրքերին, բայց քիչ անց ճանաչում են Տիոնիկին, ձերբակալում, և Ասլանը հսկում է բանտը: Նահատակի ձորում գնդակահարում են Տիոնիկին, Ասլանն այլևս գյուղում չի երևում, և օրեր շարունակ նրա ոռնոցն էր լսվում... «Շաբաթը չլրացած՝ կտրուեցաւ այդ ձայն ալ: Գարնան, երբ արագ հալող ձիւնին պատճառաւ ջուրեր յորդեցան, Տիոնիկին ու Ասլանին ոսկորները իրար խառնեցին ու քշեցին տարին իրենց հետ»,– սա այս դրամայի վերջին տեսարանն է:

**Մարգարիտա ԽԱՉԱՏՐՅԱՆ, բ. գ. դ.**

## ԱՂՕԹՔ Ի ՍԵՐ ՀԱՅ ԱՋԳԻ

Դու, որ ընտրեցիր Արարատ աշխարհն ու Լեռը Մասեաց
Ադամի համար
Ու եդեմական այգին վարսելով՝ այգեպան եղար,
Հրամայեցիր Տիգրիս ու Եփրատ, Արաքս, Ախուրեան պարտէզը ցօղել,
Իսկ դարեր յետոյ պատուէր տուեցիր Նոյեան տապանին
հանգրուան լինել,
Այժմ վերստին հայեացքդ ուղղիր երկրի դրախտին,
Աստուա՛ծ Ադամի, Նոյեան, Յաբէթի, յիշի՛ր Թորգոմին,
Սիրով մեզ շնորհի՛ր լոյսը անմատոյց Քո աստուածային,
Հոգա՛, որ յաւէտ արժանի լինենք մեր նախնիներին՝
Նոյ, Յաբէթ, Թորգոմ, Ասքանազ ու Հայկ... Քաջն Արամին:
Ժառանգութիւնը նահապետների
Քոչուոր ցեղերից առ միշտ ազատի՛ր,
Ցո՛յց տուր, որ Դու ես Թագաւոր միայն
Եւ Քեզ վայել են փառքեր յաւիտեան:

## ՅԱՏՈՒԿՋՈԿԱՏԱՅԻՆԻ ՔԱՅԼԵՐԳԸ

Երբ քամին ռազմի ամպեր կուտակի,
Եւ պահը հասնի, որ մեկնենք մարտի,
Աստուած է մեզ հետ. թո՛ղ մահը կորչի.
Մենք ենք կերտողը յաղթանակների:
Եւ նոյնիսկ կռւում ցասկոտ կատաղի
Արդար է գործը յատուկ ջոկատի,
Ու ամէն ոսոխ պիտի ընկրկի,
Երբ առնի լուրը մեր գրոհների:

Եւ զէնք ու զրահ որտեղ չեն հասնի,
Որտեղ զօրքերին ելումուտ չկայ,
Յատուկ ջոկատը ճամփայ կբացի՝
Յաղթութեան սկիզբը մեզանով կգայ:

**Մասիս ԱՐԱՐԱՏԵԱՆ**



# Ուխտավորի օրագիրը

*Ինչպես սկսվեց ճանապարհը դեպի վանքեր*

Հայաստանը թերևս միակ երկիրն է, որի ցանկացած կետում կանգնելիս և ցանկացած ուղղությամբ նայելիս հայացքդ մի սրբավայրի դեմ կառնի, և հայերն էլ այն ժողովուրդն են, որ հայրենյաց բոլոր շրջագայություններում պարտադիր ներառում են որևէ վանք ու եկեղեցի, մատուռ ու հրաշագործ համարվող վայր. որ կողմ էլ ուղևորվես, միևնույն է, ճանապարհիդ առնվազն չորս-հինգ սրբավայր կհանդիպի: Մենք էլ մեր բազմաթիվ հայրենակիցների նման, որոնք կամա թե ակամա ուխտավոր են դառնում հայաստանյան բոլոր ճամփորդությունների ընթացքում, մի օր բռնեցինք վանքի ճամփան: Սկզբում դա ճանապարհ է դեպի քարե շինությունը, որտեղ խորհրդավոր լռություն կա, մոգական մի բան, որ նման չէ այլ տեսարժան վայրերում քո զգացածին ու ապրածին. ուզում ես մնալ այստեղ, բայց չգիտես՝ ինչու: Ուզում ես բացատրություն գտնել, բայց չես կարողանում: Ուզում ես նկարագրել ապրումներդ, և էլի ապարդյուն:

Այս տարօրինակ ու նման չունեցող ապրումներով «բեռնված» վերադառնում ենք տուն: Նույն կյանքն է, նույն առօրյա հոգսերն ու ամենօրյա վազքը: Բայց այդ ամենի միջակայքում, երբ «թերթում» եմ համացանցը, հատուկ ուշադրությամբ փնտրում եմ նոր ուխտատեղիներ: Համացանցի խորամանկությունն էլ այս անգամ ի բարին է ծառայում. որքան շատ եմ վանքեր դիտում, այնքան ավելի շատ է հրամցնում: Էկրանից այս կողմ ապրում եմ այն նույն հույզերը, որ ունեցել եմ նախորդ շաբաթ այն քարե շինության տարածքում, որ վանք է կոչվում:

Առջևում կրկին շաբաթ օր է, և նորից ծրագրում ենք փախուստ առօրյա հոգսերից, աղմուկից, վազքից: Նստում ենք ավտոմեքենան, ու հնչում է հարցը.

— Ո՞ւր գնանք:

Հեռախոսիս դիտարկչի հիշողության մեջ առաջին պահպանած սրբավայրը Արուճի տաճարն է:

— Արի՛ գնանք Արուճ, — առաջարկում եմ ամուսնուս:

— Դա ի՞նչ է:

— Եկեղեցի է,— վստահ ասում եմ ես՝ չիմանալով, որ Արուճը գյուղ է Արագածոտնի մարզում, որտեղ Սբ. Գրիգոր եկեղեցին է:

Ճամփա ենք ընկնում: Կոտայքի մարզից Արուճ հասնելը երեսուն րոպե էլ չի տևում: Եկեղեցին գտնելը դժվար չէ. պատկառելի չափերի կառույցը հենց գյուղամիջյան ճանապարհի եզրին է: Մոտենում եմ տաճարին, ու նորից նույն ապրումները, նույն անբացատրելի հուզումը: Դուռը հրում, ներս եմ մտնում. անսպասելիորեն հայտնվում եմ հսկայական սրահում, որ նման չէ իմ տեսած ոչ մի եկեղեցու: Երկրորդ ամենատպավորիչ պատկերը տաճարի կենտրոնում հատակի կլոր մամռապատ հատվածն է: Դանդաղ առաջանում եմ դեպի հատակի կանաչը՝ հասկանալու համար, թե ինչու է հենց այդ հատվածում հատակը կանաչել: Արդեն մամռակալած քարերի վրա կանգնած՝ հանկարծ լսում եմ թռչունների աղմուկ, թևաբախումի ձայներ. նայում եմ վեր, ու իմ գլխավերևում տաճարի խոնարհված գմբեթից երևացող կապույտ-կապույտ երկինքն է, իսկ գմբեթի բաց հատվածի եզրերին՝ տասնյակ ծիծեռնակներ, որ թռչում, աղմկում են կապույտ երկնքի ու կանաչ հատակի արանքում: Կախարդված կանգնել եմ՝ աչքս երկնքին, ճախրող ու աղմկող ծիծեռնակներին. ահռելի տաճարը ներսից արձագանքում, եռապատկում է աղմուկը: Թվում է՝ խոնարհված գմբեթի բացվածքով մի աներևույթ կապ է ձևավորվում իմ ու տիեզերքի միջև:

Չգիտեմ՝ որքան եմ այդպես կանգնել, բայց հենց այդ պահին ես հասկացա, որ այլևս հավերժ ուխտավոր եմ, և այստեղից սկսվում է մի ճանապարհ, որ նման չէ մինչ այս անցածս և ոչ մի ճանապարհի: Մի տեղ, որը նման չէ այն վայրերին, դեպի ուր մինչ օրս ուզել եմ հասնել իմ մտքերում:

**Տաթևիկ ԱՍԱՏՐՅԱՆ**

# Աղօթքի մասին



Աղօթքը սիրտին ու բերանին պտուղն է, որ Աստուծոյ ընծայուած է որպէս շնորհակալութիւն մեր՝ Անորմէ ստացած բարիքներուն համար: Սուրբ Դիոնիսիոսի համաձայն՝ աղօթքը լուսեղէն լար մըն է, որ երկինքի ծայրէն կախուած է մեզի, մեզ Աստուծոյ հետ կը միացնէ եւ Աստուած ալ՝ մեզի հետ: Որովհետեւ երբ կ՚աղօթենք, մենք Աստուծոյ հետ կը խօսինք, իսկ երբ Աւետարանը կը կարդանք, Աստուած մեզի հետ կը խօսի: Տակաւին, Աստուած բարձր է, իսկ մենք՝ ցած, եւ մեր միտքը միշտ կը ջանայ, որ Աստուծոյ հասնի, բայց չի կրնար: Այդ պատճառով Աստուած աղօթքը որպէս միջոց ցոյց տուած է մեզի, որ եթէ անոր ծայրը բռնենք, ապա աղօթքներով երկինք ելլենք, Անոր հետ խօսինք եւ մեր պակասութիւնը Աստուծոյ անմոռաց բնութեան յանձնենք եւ Անորմէ մեր փրկութեան կնիքը ստանանք:

Արդարեւ, աղօթքը Արքայութեան բանալին է, որով կը բանանք Աստուծոյ գանձարանն ու պահարանը եւ Անորմէ կ՚առնենք մեր բարի խնդրանքները: Հետեւաբար՝ պէտք է միտքով առ Աստուած դառնանք սուրբ ու խնարի յօժարութեամբ, ինչպէս նաեւ մաքուր խնդրանքներով զԱստուած խոնարհեցնենք մեր աղաչանքներուն:

Արդ՝ աղօթքներուն պտուղը շատ է:

Նախ՝ Մովսէս մարգարէն աղօթքով Կարմիր ծովը պատռեց եւ Իսրայէլի որդիները անցուց դէպի Աւետեաց երկիրը (Ելք 14.21–22, հմմտ. Ելք 14.13–31). իսկ մենք աղօթքով մեղքերու ծովը կը պատռենք եւ երկինք կ՚ելլենք: Դարձեալ՝ Մովսէս աղօթքով երկինքէն մանանայ իջեցուց (Ելք 16.4) եւ ժայռէն ջուր բխեցուց (Ելք 17.5–6, Թուեր 20.7–11). իսկ մենք աղօթքով Աստուծոյ քաղցրութիւնը կը ճաշակենք եւ կարծր ժայռէն, որ է Աստուած, զովացուցիչ ջուր կ՚առնենք ու կը խմենք, որ է Անոր ողորմութիւնը:

Երկրորդ՝ աղօթքը ամուլ եւ անծին հոգին ծննդական կ՚ընէ, ինչպէս Աբրահամի աղօթքը անծննդականութենէ բժշկեց Աբիմելէքին տունը (Ծննդ. 20.17–18):

Երրորդ՝ աղօթքը մարդուն կեանքը կ՚աւելցնէ, ինչպէս յայտնի է Եզեկիա Թագաւորին աղօթքներէն, որու կեանքը տասնհինգ տարիով աւելցաւ (Դ Թագ. 20.1–6, հմմտ. Ես. 38.1–5):

Չորրորդ՝ աղօթքը մարդս գերութենէն կը դարձնէ, ինչպէս յայտնի է Մանասէ Թագաւորէն, որ աղօթելով ազատեցաւ Բաբելոնի գերութենէն (Բ Մնաց. 33.12–13):

Հինգերորդ՝ աղօթքը թշնամին կը հալածէ, ինչպէս յայտնի է Նաւէի որդի Յեսուի աղօթքներէն, որ երբ աղօթեց, թշնամիներուն վրայ քարէ կարկուտ իջաւ երկինքէն (Յեսու 10.10–14). իսկ Մովսէս աղօթքով կոտորեց ամաղեկացիները՝ իր ձեռքերը տարածելով (Ելք 17.8–13), ինչպէս Քրիստոս ձեռքերը տարածեց խաչին վրայ (հմմտ. Յովհ. 19.18). իսկ Սամուէլ Մարգարէն աղօթքով երկնային որոտմամբ կոտորեց այլազգիները (Ա Թագ. 7.9–10):

Վեցերորդ՝ աղօթքը ամուլը պտղաբեր կ՚ընէ, ինչպէս Սամուէլի մօր պարագան է, որ աղօթքով եօթը որդիներ ծնաւ (Ա Թագ. 1.10–20, 2.21). իսկ Փենանան, որ չէր աղօթեր, եօթը որդիներէն զրկուեցաւ (տես Ա Թագ. 2.5): Զաքարիան՝ Յովհաննէս Մկրտիչին հայրը, աղօթքով Սուրբ Յովհաննէսը ունեցաւ (Ղուկ. 1.5–25), իսկ Յովակիմն ու Աննան՝ Տիրամայր Մարիամ Աստուածածինը:

Եօթներորդ՝ դրախտին դուռը կը բանայ, ինչպէս էր աջակողմեան աւազակին պարագան (Ղուկ. 23.42–43), որ քիչ աղօթեց, սակայն շատ ստացաւ. ուշ ընթացաւ, սակայն կանուխ ժամանեց:

Ութերորդ՝ աղօթքը երկնային փառքով կը պայծառացնէ մարդը. այս բանին օրինակ է մեզի Քրիստոս, որ երբ յաղթեց, պայծառացաւ, ինչպէս կ՚ըսէ Սուրբ Ղուկաս, թէ երբ Ան աղօթելու սկսաւ, Անոր երեսին տեսքը այլակերպ եղաւ (Ղուկ. 9.28–29), որ ո՛չ թէ Իր աղօթքներուն վարձքը ստացաւ այդ պայծառութիւնը, այլ՝ մեզի ծանուցեց, թէ ան, որ անդադար կ՚աղօթէ, ի վերջոյ այսպէս պիտի պայծառանայ:

Իններորդ՝ աղօթքը մարդս կը բժշկէ հիւանդութենէ, ինչպէս կ՚ըսէ Սուրբ Յակոբոս, թէ հաւատքով եղած աղօթքը պիտի փրկէ յոգնածները (տես Յակ. 5.15). պիտի յարուցանէ մեռելները, ինչպէս Ղազարոսը (Յովհ. 11.41–44). պիտի փրկէ զրպարտեալները, ինչպէս Շուշանը (Դան. 13.35, 42–44). պիտի տանջէ սատանան, ինչպէս դեւ մը կ՚աղաղակէր Սուրբ Բարթուղիմէոս առաքեալին, թէ աղօթքներդ կը չարչարեն ու կ՚այրեն զիս: Կը գոցէ ու կը բանայ երկինքը, ինչպէս Եղիային աղօթքը երեք տարի եւ վեց ամիս երկինքը գոցեց ու դարձեալ բացաւ (Գ Թագ. 17.1, 18.41–45, Յակ. 5.17–18):

Իսկ թէ ինչ պատճառով երբեմն աղօթքը ընդունելի չ՚ըլլար, բազմաթիւ պատճառներ կան:

Նախ՝ աղօթողին մեղքը, ինչպէս Աստուած Եսայիի միջոցով կ՚ըսէր. «Երբ աղօթէք, պիտի չլսեմ, որովհետեւ ձեր ձեռքերը արեամբ լեցուն են» (Ես. 1.15), իսկ ի ծնէ կոյրը կ՚ըսէր, թէ՝ «Գիտեմ, որ Աստուած մեղաւորներուն չի լսեր» (Յովհ. 9.31):

Երկրորդ՝ երկբայութեամբ եւ կասկածով աղօթելը, ինչպէս Սուրբ Յակոբոս կ՚ըսէ «Հաւատքով թող խնդրէ ու թող չ՚երկմտի» (տես Յակ. 1.6), որովհետեւ Պետրոս առաքեալը ծովուն վրայ քալած ատեն, երբ կասկածեցաւ, սկսաւ ընկղմիլ (տես Մատթ. 14.28–31):

Երրորդ՝ որ մարդ անպէտք բան մը կը խնդրէ Աստուծմէ, որ ո՛չ Տուողին վայել է եւ ո՛չ ալ առնողին օգուտ է, ինչպէս Աստուծմէ գեղեցիկ կին, դրամ եւ ապրանք խնդրելը:

Չորրորդ՝ անարժանութիւն այն բանին համար, որ կ՚աղօթէ, ինչպէս հրեաները, որոնք անարժան էին ազատութեան, երեմիա մարգարէին անոնց համար ըրած աղօթքը ընդունելի չեղաւ (տես Երեմ. 11.14, 14.11):

Հինգերորդ՝ չար եւ աղտեղի խորհուրդները կ՚արգիլեն աղօթքը, ինչպէս Տոբիթինը, որ պղտորած միտքով կը քնանար, ճնճղուկներու ծերտով կուրցաւ (տես Տոբիթ 2.9–10):

Վեցերորդ՝ աստուածային օրէնքները արհամարհել, ինչպէս որ վարդապետ մը (ուսուցիչ մը) չլսող աշակերտի մը դաս չի տար, այդպէս ալ Աստուած չլսող մարդուն խնդրանքը չի կատարեր, ինչպէս Դաւիթ իր զաւակին համար շատ աղօթեց, սակայն Աստուած չլսեց, որովհետեւ Դաւիթ չլսող գտնուեցաւ Աստուծոյ օրէնքներուն, որոնք կ՚ըսէին. «Մի՛ շնար» եւ «Մի՛ սպաններ» (տես Բ Թագ. 11.2–17, 12.7–14, 16–18, Ելք 20.14, 13):

Եօթներորդ՝ խստասրտութիւնը, որովհետեւ այն մարդը, որ չի՛ լսեր աղքատին, Աստուած ալ չի՛ լսեր այդպիսիին աղօթքը, ինչպէս մեծահարուստը, որ չլսեց Ղազարոսին, Աբրահամն ալ չլսեց մեծահարուստին (Ղուկ. 16.19–31), իսկ Սողոմոն կ՚ըսէ, թէ ան, որ կը գոցէ Իր ականջները՝ չլսելու համար աղքատին, ինք եւս պիտի խնդրէ Տիրոջմէ, եւ Աստուած պիտի չլսէ իրեն (տես Առակ 21.13): Դարձեալ՝ ով որ քարսիրտ է եւ չ՚ողորմիր իրեն պարտաւորութիւն ունեցողին, Աստուած ալ չ՚ողորմիր իրեն, երբ Անոր աղօթէ, քանի որ կ՚ըսենք, թէ՝ «Ներէ մեզի, ինչպէս մենք եւս կը ներենք» (Մատթ. 6.12, 14–15, Ղուկ. 11.4):

Ութերորդ՝ մեղքերու մէջ յառաջանալը, ինչպէս Եսաւը, որ արժանի չեղաւ իր հօր՝ Իսահակի օրհնութեան (Ծննդ. 27.30–40, հմմտ. Եբր. 12.16–17), որովհետեւ մտադրած էր իր եղբայրը սպաննել (Ծննդ. 27.41):

Իններորդ՝ աղօթողին անհամբերութիւնը. Սաւուղ, որ չհամբերեց Սամուէլի գալուստին, այլ պատարագ մատուցեց, Աստուած չ՚ընդունեց պատարագը (Ա Թագ. 13.8–14):

Տասներորդ՝ վնասակար բաներ խնդրելը, ինչպէս Յակոբոսն ու Յովհաննէսը Քրիստոսէ հրաման խնդրեցին՝ երկինքէն կրակ իջեցնելու եւ այրելու սամարացիներու գիւղերէն մին, սակայն Քրիստոս արգիլեց (Ղուկ. 9.54–56). իսկ Պօղոս խնդրեց, որ իր մարմինին խայթը վերցուի, սակայն Աստուած չլսեց (Բ Կորնթ. 12.7–9):

Տակաւին, աղօթքի վայրը յատկապէս եւ իւրայատուկ կերպով եկեղեցին է, ինչպէս Դաւիթ կ՚ըսէ. «Եկեղեցւոյ մէջ զԱստուած օրհնեցէ՛ք» (Սաղմ. 67.26[27]). ինչպէս նաեւ՝ «Քեզի օրհնութիւն կը վայելէ Աստուած, Սիօնի մէջ եւ Քեզի աղօթք պիտի մատուցուի Երուսաղէմի մէջ» (Սաղմ. 64.1–2): Իսկ Պետրոսն ու Յովհաննէսը աղօթքի իններորդ ժամը (կէսօրէ ետք ժամը երեք) Տաճարին մէջ կը կատարէին (Գործք 3.1): Սակայն եկեղեցին չ՚արգիլեր տան մէջ աղօթել անկարելի ժամանակի (այսինքն՝ երբ պատճառ կայ եկեղեցի չգալու), այլ կը խափանէ խորհուրդներու կատարումը տունէն ներս, որովհետեւ եկեղեցին յատուկ կերպով խորհուրդներն ու աղօթքները կատարելու համար կը շինուի: Քանի որ եկեղեցի գալ եւ աղօթել հազարապատիկ աւելի լաւ է, քան տան մէջ աղօթելը, որովհետեւ՝ «Ուր որ երկու կամ երեք հոգի կը հաւաքուին, Ես այնտեղ՝ անոնց մէջ եմ»,– ըսաւ Քրիստոս (Մատթ. 18.20): Նաեւ Դաւիթ կ՚ըսէր, թէ՝ «Տէր, զիս հաղորդակից դարձուր Քեզմէ բոլոր երկիւղածներուն» (տես Սաղմ. 118.63): Կը պատահի նաեւ, որ մարդը անարժան է Աստուծոյ աղաչելու, բայց եկեղեցի երբ կու գայ, արժանաւորներու աղօթքներուն մասնակից կ՚ըլլայ: Ինչպէս Քրիստոսի ժամանակ անդամալոյծ մը տան առաստաղէն պարաններով վար իջեցուցին Քրիստոսի առջեւ. թէեւ այդ անդամալոյծը կատարեալ հաւատք չունէր, սակայն Սուրբ Աւետարանը կ՚ըսէ, թէ՝ «Յիսուս տեսնելով անոնց հաւատքը, կ՚ըսէ անդամալոյծին. «Որդեա՛կ, մեղքերդ ներուած թող ըլլան քեզի»» (Մարկ. 2.1–12: Ղուկ. 5.17–26). ասիկա ըսաւ՝ անդամալոյծը իջեցնողներուն կատարեալ հաւատքին համար:

Այսպէս՝ մարդ մը, որ արժանաւոր աղօթք չի՛ կրնար ընել եկեղեցւոյ մէջ, սակայն խոնարհելով եւ գալով եկեղեցի՝ արժանաւորներուն աղօթքներուն մասնակից կ՚ըլլայ, ինչպէս անդամալոյծը, որ հաւատքով բերողներուն (հաւատքին համար) բժշկուեցաւ: Ահա այս է, որ հաւատամքի մէջ հաղորդութիւն սրբոց կը կոչենք:

Իսկ աղօթքի ժամին համար գիտցի՛ր, որ Քրիստոս ժամանակ չսահմանեց՝ երեկոյեան կամ առաւօտեան, միայն թէ աղօթել պատուիրեց՝ ըսելով, թէ պէտք է միշտ աղօթել առանց ձանձրանալու (տես Ղուկ. 18.1). եւ Ինք՝ Տէրը, ամբողջ գիշերը կ՚աղօթէր եւ ցերեկը կը քարոզէր:

Իսկ Դաւիթ կ՚ըսէր. «Օրուան մէջ եօթը անգամ պիտի օրհնեմ Քեզ» (Սաղմ. 118.164): Սակայն պէտք է գիտնալ, որ մնայուն կերպով առանց աշխատելու՝ աղօթքներու պարապիլը կարելի չէ, որովհետեւ մարմինն ալ իրը կը խնդրէ, հետեւաբար՝ ամէն ժամ աղօթելը ինչպէ՞ս կ՚ըլլայ:

Իմացի՛ր, որ աշխարհը փորձութեան եւ պատերազմի տուն է, իսկ աղօթքը քրիստոնեաներուն զէնքն ու զրահն է. տակաւին, զինուորը, մնայուն կերպով պատերազմի մէջ ըլլալով, իր զէնքը իր ձեռքէն պէտք չէ ձգէ. արդարեւ, միշտ աշխատանքէ դադրելով՝ աղօթելը հնարաւոր չէ, սակայն միտքով աղօթելը միշտ կարելի է:

Տակաւին, այդ ամէն ժամ ըսելը ցոյց չի՛ տար, թէ քսանչորս ժամն ալ պիտի աղօթեն, որովհետեւ քունի ժամանակ կայ, աշխատանքի ժամանակ կայ. կ՚ուզէ ըսել, թէ աղօթքի համար սահմանուած ժամէն ու ժամանակէն մի՛ դադրիր աղօթելէ, ինչպէս մանուկի մը ըսենք, թէ՝ «Ո՛վ մանուկ, մի՛շտ ջանայ ուսանիլ», որով ըսել կ՚ուզենք, թէ՝ «Ուսումի ժամանակ պարապ մի՛ կենար»:

Դարձեալ՝ որովհետեւ աղօթքը միտքի դարձն է առ Աստուած եւ սիրտին ու բերանին պտուղը՝ ընծայուած Աստուծոյ՝ Անորմէ ընդունած բարերարութիւններուն համար: Հետեւաբար՝ իւրաքանչիւր բարիք ընդունած ժամանակ ով որ շնորհակալութիւն կը յայտնէ եւ գոհութիւն կու տայ Աստուծոյ, այդպիսին միշտ առ Աստուած կ՚աղօթէ:

Նաեւ իւրաքանչիւր բարեգործութիւն աղօթք եւ շնորհակալութիւն է Աստուծոյ, քանի որ աղօթքներու անունը կերպով մը իւրաքանչիւր բարեգործութեան վրայ կը դրուի, որովհետեւ անդադար աղօթող կը կոչուի բարեգործ մարդը: Նաեւ մարդուն սուրբ կենցաղավարութիւնը առ Աստուած աղօթք է, քանի որ սիրտով ու գործով սուրբը զԱստուած կը տեսնէ իր նմանին մէջ՝ իբրեւ հայելիի մը մէջ, իսկ պղծալից գործերով կը հեռանայ Աստուծմէ:

Հետեւաբար՝ ան, որ սրբութեան մէջ միշտ հաստատ է, իր սրբութեան մէջ կ՚երեւցնէ Աստուծոյ պատկերը ու կը տեսնէ զինք. ըստ այնմ՝ երանի՛ անոնց, որոնք սիրտով սուրբ են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն (տես Մատթ. 5.8):

Տակաւին, այլ բան է աղօթքը, եւ այլ բան՝ աղաչանքը, որովհետեւ աղօթքը Աստուծմէ պարգեւ մը կը խնդրէ, իսկ աղաչանքը կը խնդրէ չարէն ազատիլ: Դարձեալ՝ միշտ եւ անդադար աղօթելը, որ ամէն ինչ Աստուծոյ վերագրէ՝ իբրեւ բարիքներու Տուողը, քանի որ ի՞նչ բան կայ մեզ մօտ, որ Աստուծմէ առած չենք:

Իսկ թէ աղօթքներուն մէջ ի՞նչ պէտք է խնդրենք Աստուծմէ, Քրիստոս «Հայր մեր» աղօթքին մէջ (այդ ուղղութեամբ) եօթը բան կ՚ուսուցանէ.

Առաջինը այս է. «Հայր մեր, որ երկինքին մէջ ես: Սուրբ թող ըլլայ անունդ»:

Երկրորդը այս է. «Արքայութիւնդ թող գայ»:

Երրորդը այս է. «Քու կամքդ թող կատարուի, ինչպէս երկինքին մէջ, այնպէս ալ երկրի վրայ»:

Չորրորդը այս է. «Մեր ամէնօրեայ հացը այսօր եւս մեզի տուր»:

Հինգերորդը այս է. «Ներէ՛ մեզի մեր պարտքերը (յանցանքները), ինչպէս մենք եւս կը ներենք մեր պարտապաններուն»:

Վեցերորդը այս է. «Մեզ փորձութեան մի՛ տանիր»:

Եօթներորդը այս է. «Այլ փրկէ՛ մեզ չարէն»:

Իսկ վերջինը գոհութիւն է եւ ո՛չ թէ խնդրանք, որ կ՚ըսէ, թէ՝ «Որովհետեւ Քուկդ են Արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը, յաւիտեանս»:

*Շարունակելի*

**«Քրիստոնէական Ուսանելի», 1806**
**Աշխարհաբարի վերածեց**
**Վարանդ (Յակոբ) Քորթմոսեանը**

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

**ՆՈՅԵՄԲԵՐ**

† Ս. Հրեշտակապետեր – *Նոյեմբերի 7*

† Ս. Աստվածածնի ընծայումը – *Նոյեմբերի 21*

† Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս – *Նոյեմբերի 28*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Նշան Աբասյան

**Գրանցման վկայական՝** 624
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հեռախոս՝** (010) 517 280
**Էլ. փոստ՝** qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
**web կայք՝** www.armenianchurch.org
**Ստոր. տպագր.** 4.11.2026 թ.